



ՄՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ԿՈԹՈՂԱՅԻՆ ՄՆԱԿՈՒՅԹԸ

ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանի հանգամանալից մատուցմանը ընթերցողներին ներկայացնենք նրա և Նժդեհի Երանյանի ուսուցչի և աշակերտի համահեղինակությամբ լույս տեսած «Արցախի կոթողային մշակույթը» աշխատությունը, որը շուրջ 20 հոգանոց խմբի տարիների քրտնաջան աշխատանքի արգասիքն է: «Ես գտնում եմ, որ մեր առաջընթացը, մեր ուժը կայանում է թիմային աշխատանքի մեջ», - ներկայացնում սկզբում ասաց գլխավոր բանախոս Հ. Պետրոսյանը, որը ծնվել ու մեծացել է Արցախում և համեստ գիտնականի իր պարտքն է կատարում. ներկայացնում է մշակույթը, այսինքն՝ մեր ժողովրդին, տվյալ դեպքում՝ արցախահայերին. «Մենք ոչինչ չենք հնարել, ոչինչ չենք մեկնաբանել, մյև կայտերել ենք փաստեր, ներառյալ արդրեջանցի հետազոտողների մոտեցումները՝ առանց որևէ քամահրանքի կամ կարծիքի՝ անկախ նրանից, այդ կարծիքը հիմարություն է, թե ինչ, մենք փորձել ենք փաստերով այդ ամենին պատասխանել»,- մեր պատմիչների հանգույն ասում է հետազոտողը:

Ըստ բանախոսի, Արցախի կոթողային մշակույթը բավականին ընդարձակ է. այն սկսվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակից (ավելի վաղ կոթողներ դեռ մեզ հնարում էին) և գալիս է ընդհուպ մինչև 20-րդ դարի 20-30-ական թվականները: Գիրքը հատուկ բաժանումներ ունի: Առաջին բաժնում արցախյան տափաստանի ուշագրավ կոթողներն են՝ շատ եզակի, և մեկ անգամ չէ, որ թե՛ հայ մասնագետները, թե՛ հատկապես արդրեջանցիները փորձել են տարբեր մեկնաբանություններ տալ: «Շնորհիվ իմ աշակերտ Նժդեհ Երանյանի, այսօր այդ կոթողների կիրառության ու տարածման և ժամանակի մասին ունենք հստակ պատկերացում, որոնք էապես տարբերվում են մինչ այդ կատարած աշխատանքներից», - ասում է Հ. Պետրոսյանը, և նրա հորդորով Նժդեհ Երանյանը շարունակում է ներկայացնել:

ԿՈԹՈՂԱՅԻՆ ՄՆԱԿՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ. ՄԱՐԴԱՎԵՐՊ ԿՈԹՈՂՆԵՐ

Ըստ Ն. Երանյանի, Արցախի տարածքում և առհասարակ, կոթողային մշակույթը, ինչպես ասվեց, սկսվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակում: Դրանք ամբողջ Կովկասի, Առաջավոր Ասիայի տարածքում շատ հայտնի ու տարածված ուղղաձիգ կոթողներն էին, որոնք կանգնեցնում էին դամբարանների վրա, և կարելի է ասել, առաջին դրսևորումներից են ու հետագայում է, որ էվոլյուցիա ապրեցին ու այլ տեսքով հայտ եկան:

Ն. Երանյանը այնուհետև ցուցադրում է Արցախի տարածքում կոթողային մշակույթի հաջորդ շարքը՝ պայմանական անվամբ մարդակերպ սալերը, որոնք թեպետ քիչ օրինակով, սակայն հայտնի են Այգեստան (Բալուչա) գյուղի շրջակայքում: Դրանք էլ հայտնի են 2000-ական թթ. սկզբում, երբ Արցախում առաջին հնագիտական հետազոտություններն էին սկսվում: Համլետ Պետրոսյանի և Վարդգես Սաֆարյանի պեղումներից, թեպետ քիչ օրինակներով, բայց դրանք ևս ներկայացված են:

Եվ իհարկե, Արցախի կոթողային մշակույթի՝ նախաքրիստոնեական շրջանի կոթողային մշակույթի լավագույն և ամենալավ արտահայտված դրսևորումներն Արցախի մարդակերպ կոթողներն են: Շատ հետաքրքիր մշակույթային դրսևորում, որ Հայկական լեռնաշխարհի տարածքում, կարելի է վստահորեն ասել, ամենամեծ կուտակում և ամենատիպիկ պատկերները հանդիպում են հենց Արցախի տարածքում, մասնավորապես՝ տափաստանային հատվածներում, հաչենագետի ներքնահովտում: Այս կոթողները չնայած հայտնի են դեռ նախորդ դարի 60-ական թվականներից (խորհրդային տարիներից) արդրեջանից հետո

տազոտողները արդեն նկատել էին), սակայն դրանց վերաբերյալ քիչ հետազոտություններ կան: Եվ հետաքրքիր է, որ ինչպես Արցախի մշակույթային ժառանգության այլ դրսևորումները, սրանք նախաքրիստոնեական շրջանից են և պետք է գոնե արդրեջանական ազգի թիրախի՝ արդրեջանականացման կամ աղվանականացման շրջանակներից դուրս լինեն, որ հաճախ պատահում է Արցախի մշակույթային ժառանգության տարբեր դրսևորումների հետ, բայց այդպես չէր: Արդրեջանցի հետազոտողները մի քանի ուսումնասիրություններում նշում են, որ սրանք աղվանական կոթողներ են, որ քրիստոնեությունից առաջ տարածվել են, սակայն սա, մեղմ ասած, ծիծաղելի է, քանի որ ամենամախնական հետազոտություն-




ներն արդեն իսկ հերքում են այդ տեսությունը, և տարօրինակ է, որ նրանք կամ չեն նկատել, կամ չեն ցանկացել նկատել ակնհայտ մի քանի բաներ, որ հանդիպում են այս կոթողների վրա, մեկնաբանում է Հ. Երանյանը:

Սա մի շատ ընդարձակ մշակույթի տեղական դրսևորում է, որի վրա տեսնում ենք և՛ արտաքին ազդեցությունը, և՛ արտաքին միջամտությունը, և՛ միևնույն ժամանակ շատ տիպիկ, տեղական առանձնահատկությունները: Դրանք դրսևորվում են բանդակելու տեխնիկայի և պատկերագրության մեջ: Մ. թ. ա. 8-6-րդ դարերում թվագրված այս կոթողների հետազոտությունը շատ երկար է, և առանձին կարելի է ներկայացնել, բայց բանախոսը նշեց, որ 2012-2013 թթ., երբ իրենք վերսկսում էին հետազոտությունը, ընդամենը 10-12 օրինակ էր հայտնի, և շուրջ 10 տարվա ուսումնասիրության արդյունքում 30-ից ավելի մարդակերպ կոթողներ ունենք: Եվ մի կարևոր բան. կոթողների մեծ մասը տեղաշարժված է, դրանք տեղափոխված են եղել տարբեր ժամանակներում՝ մի մասը նախաքրիստոնեական շրջանում, մի մասը միջնադարում՝ իբրև վերաօգտագործված շինանյութերի մաս, որոշները՝ խորհրդային տարիներին: Այս կոթողների ուսումնասիրության հարցում շատ կարևոր է 2011թ. մի հայտնագործություն. Մարտակերպի շրջանի Նոր Կարմիրավան գյուղի տարածքում հայտնաբերվել է մարդակերպ կոթողների մեծ խումբ: Սա շատ կարևոր և ուշագրավ է նրանով, որ առաջին դեպքն էր Արցախի տարածքում, երբ մարդակերպ կոթողները վավերացվեցին իրենց տեղում և գուցե ոչ իրենց դիրքով, քանի որ մեծ մասը պառկած էր, բայց ամենայն հավանականությամբ դրանք դամբարանների վրա կանգնեցված կոթողներ են: Սա շատ կարևոր է ոչ միայն Արցախի տարածքի մարդակերպ կոթողների ուսումնասիրության համար, այլև առհասարակ հայ մշակույթի ուսումնասիրության հարցում, քանի որ 400-ից ավելի նմանատիպ կոթողներ, որոնք հայտնաբերվել են Իրանի տարածքում, ոչ մեկն իր կանգնեցման տեղում չէ, և մասնագետները ինքնարկում ու բանավիճում են, թե վերջիվերջո ինչ են եղել այդ կոթողները: Դրանցից մեծ թվով հանդիպում են Հյուսիսային Կովկասում, Գրիմում, և դրանց մի զգալի մասը տեղաշարժված է: Արցախի մարդակերպ կոթողների ուսումնասիրությունը գալիս է լրացնելու այդ շարքը և տալիս է Առաջավոր Ասիայում կոթողային մշակույթի ուսումնասիրության հարցում մի կարևոր ու մասամբ նաև բարդ հարցի պատասխան՝ որտեղ են ստեղծվել, ինչպես են զարգացել և ինչի համար են կանգնեցված եղել այս կոթողները:

ԱՆՏԻԿ ԿՈԹՈՂԱՅԻՆ ՄՆԱԿՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Հ. Պետրոսյանը նշեց, որ իրենց երկարամյա պեղումները Տիգրանակերտում երևան են հանել պաշտպանական հզոր կառույցներ, որոնք մշակվել են Ալեքսանդրիայում, տարածվել են Փոքր Ասիայում ու Արցախում՝ Տիգրան Մեծի կայսերական նախաձեռնությամբ: Այսօր արդրեջանցիներն անընդհատ փորձում են ինչ-որ բան ասել Տիգրանակերտի դեմ, բայց Տիգրանակերտի ամրաշինական համակարգը, որը միանշանակ հելլենիստական մշակված համակարգ է ու առաջին անգամ կիրառվել է Արտաշատում, հետո տեղափոխվել է Տիգրանակերտ, դրա դեմ որևէ կռվան հնարավոր չէ բերել, այն անվանել աղվանական, քանի որ ըստ լույսն տեղական ավանդույթի շարունակություն է չէ մեծ հաշվով, այլ կայսերական նորամուծություն. Տիգրանը որտեղից որ ճարտարապետներ, նախագծողներ, վարպետներ է բերել, հավաքել է, կոնսոլիդացրել ու ստեղծել այդ ամենամ կառույցը: Բանախոսի փաստամբ՝ մենք Տիգրանակերտում ունենք հիանալի քարի մշակման տեխնիկա. ամբողջ Հայկական լեռնաշխարհում կրաշաղախն առաջին անգամ օգտագործվել է Տիգրանակերտում, որովհետև այն կրահանքի վրա է ու նոր տվյալներ է մեզ տալիս: «Մենք այնտեղ ունեցել ենք շատ ավելի կարևոր շինություններ, բայց դրանցից շատ քիչ բան ենք հասցրել բերել», - ցավով նշեց



նա: Բայց հաչենագետի հովտում կան հելլենիստական կոթողների մասեր, քանդակների փոքր բեկորներ, որոնք նույնպես ներկայացված են այս գրքում: Գրքի հիմնական մասը նվիրված է քրիստոնեական կոթողային մշակույթին: Հ. Պետրոսյանը շեշտում է, որ մինչև խաչքարերի երևան գալը 9-րդ դարում Արցախում և ողջ Հայաստանում կանգնեցվում էին մինչև 6-7մ բարձրությամբ կոթողներ: Տեսասահիկով ցույց է տալիս դրա կառուցվածքը. ահա գեոմետրիայիսը, պատվանդանը, սյունը, խոյակը, որի վրա խաչքարն ապրել է, խաչքարակալի վրա թևավոր խաչն է: Դրա մասնաբաժան պատկերագրությունն ու առանձին դետալներ բավականին տարածված են, ընդ որում, հետաքրքիր է, որ ամբողջ այդ տարածաշրջանի առաջին հունարեն քրիստոնեական արձանագրությունները մեզ տալիս է Տիգրանակերտը, որը նույնպես շեշտում է, որ այն եղել է բարդ էթնիկ հանրույթ, որտեղ հույներ են եղել, առաջին քրիստոնյաները գրել են նաև հունարեն: Բայց, իհարկե, Տիգրանակերտի այս խաչքարի հորինվածքները հիմք են տալիս վավերացնելու նաև առաջին հայերեն արձանագրություններն Արցախի տարածքում: Դրանք հայկականության ամենակարևոր վկայություններն են: Մենք գիտենք, որ որպեսզի քրիստոնեությունը տարածվի, Մեսրոպ Մաշտոցն ստեղծել է նաև աղվանական այբուբեն, այսինքն՝ լեզվակիրների համար հատուկ համակարգ է ստեղծել և որպեսզի աստվածային խոսքը բոլորին միանգամից հասնի, ստեղծել է նաև վրացական այբուբեն: Այսինքն՝ հայկական գրությունների հայտնաբերումը վաղ Արցախի տարածքում միանշանակ խոսում է այն մասին, որ այն ուղղված է եղել այն մարդկանց, ովքեր հայախոս էին ու հայագիր դարձան: Եվ այդ տեսակետից, իհարկե, շատ կարևոր են այս վաղ արձանագրությունները (մոտ 30 արձանագրություն ունենք, ու Հ. Պետրոսյանը հիմա ավարտում է դրանց մանրամասն քննությունը): Շատ հայտնի աղվանագետը (Նա եղել

է Ստեփանակերտում) վկայում է, որ Կուրից ներքև ընդհանրապես աղվաններն մի տառ չի գտնվել այն ժամանակ, երբ այդ նույն այբուբենները լայնորեն կիրառվում էին:

Հ. Պետրոսյանի այս հանգամանալից ներկայացնելը մի նպատակ է հետապնդում. այն ճանապարհը, որ իրենք ընտրել են, այն քննությունը, որ կատարում են, զուտ ակադեմիական է: Այն չի անդրադառնում ենթադրություններին, որևէ մեկի խոսքին և այլն, ու այս տեսակետից դա շատ կարևոր է համարում:

ՊԼԱՍՏԻԿԱԿՐՈՒԹՅՈՒՆ  
Վաղքրիստոնեական Արցախն ունի հարուստ պատկերագրություն: Հայտնի խոսք է, որ պատկերը անգրագետի համար նույնն է, ինչ որ գրագետի համար՝ գիրը: Եվ վաղքրիստոնեությունը օգտագործում էր այդ պատկերները, ու այստեղ մենք կարող ենք տեսնել հիանալի լուսային մշակումներ, այգային մթնոլորտ, ծիսակարգը, որտեղ վառում են մոմերը, և իհարկե, խոյազուլիս պաշտպանիչ համակարգերը, սյուններ, որ վավերացվել են տարբեր տեղերում: Սյուններ ավարտվում էին խոյակներով, և վերևի անցքին ամրացնում էին թևավոր խաչը:

Ըստ Հ. Պետրոսյանի, այս մանրամասն նկարագրությունը մեծապես հետաքրքրում է դրսի մասնագետներին, որովհետև իրենք էլ ունեն բյուզանդական, դպտական, իռլանդական նմուշներ: Բանախոսի վերջին հոդվածներից մեկը նվիրված է հայկական վաղքրիստոնեական կոթողներին ու իռլանդական բարձր խաչերի համեմատությանը՝ նորագույն հետազոտությունների լույսի տակ: Այդ նորագույն հետազոտությունները հիմնականում հաչենագետի նյութերն են: Հոդվածը տպագրվել է անգլերեն: Այսինքն, մենք ունենք մշակույթ, որի գաղափարակիրները համաշխարհային մեծ ծավալի մարդիկ էին: Նրանք համարձակորեն գնում էին հոմերի երկիրը ու քրիստոնեություն էին քարոզում, կտրում անցնում էին Կովկասյան լեռնաշղթան: Եվ այս ամենը մեր հնեաբանները պարտավոր էին մանրամասն վավերացնել, ներկայացնել՝ ցույց տալով, որ խոսքը չի գնում ամփոփ, իր ներսում ներփակ մի համայնքի մասին, այլ՝ ժամանակի բոլոր առաջավոր երևույթներին արձագանքող մշակույթի: Ասենք, այգային այդ հորինվածքները. Քրիստոսը ինքը նման է այն այգեպանին, որը զարդարեց իր այգին: Խաչելությունը համեմատվում է խաղողի հետ. ինչպես որ խաղողը ճզմվում, գինի է դառնում՝ աստվածային հեղուկ, այնպես էլ Քրիստոսը թափեց իր արյունը համուն մեղավոր մարդկության փրկության: Այս ասոցիացիաներն ստեղծում են դրախտային ընդարձակ պատկերագրություն, և դա մենք ունենք նաև Արցախում, ի դեմս Տիգրանակերտի մեծ բազիլիկ եկեղեցու ու նրա շքամուտքերի խոյակների, որոնք արշավախումբ մանրամասն հետազոտել ու հրատարակել է:

Հ. Պետրոսյանի կանխատեսմամբ արդրեջանցիների հաջորդ հարձակումը լինելու է խաչքարերի վրա: Արցախը Աղվանից եկեղեցու կազմում է եղել, ու այդ Աղվանից անունը արդրեջանցիների կողմից անընդհատ շահարկվում է, որ մանա տարածքներում ստեղծված խաչքարերը չեն կարող լինել հայկական: Դեռևս 50 տարի առաջ մի հիմար տեսություն է մշակվել, որ թե՛ն հայկական խաչքարերը երկմաս են, աղվանական խաչքարերը եռամաս են, ու ընդարձակ հոդված են գրել այդ կառուցվածքի մասին: Ի ցավ մեզ, Հայաստանում մինչ այդ որևէ մեկը խաչքարային հորինվածքի կամ ճարտարապետական կառույցի համար չէր օգտագործում «կառուցվածք» եզրը, և Հ. Պետրոսյանը ստիպված էր 10 տարի հատկացնել՝ հասկացնելու, որ այդ ամենը հիմարություն է, այնպես չէ, որ Արցախի խաչքարերը, դրանց հորինվածքը, կառուցվածքը նույնն են, ինչ որ ոչ հայկական խաչքարերը, որ աղվանից անունով կոչվող եկեղեցին ուներ նույն աստվածաբանական գաղափարաբանությունը և ծիսակարգը, ինչ՝ հայոց եկեղեցին: Եվ խաչքարն առաջացել է նաև աղվանից կոչվող եկեղեցու տարածքում, քանի որ խաչքարը առանձնահատուկ հայկական քրիստոնեական պատկերացման արդյունք է: Եվ այդ ամենի

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

մասին գրքում բավական մանրամասն ներկայացված է: 3. Պետրոսյանը շեշտադրեց արցախյան խաչքարերի պատկերազարդությունը, հատկապես, այսպես կոչված, աշխարհիկ պատկերաբանողակը: Իրականում դա աշխարհիկ չէ, խաչային հորինվածքից ներքև կարելի է տեսնել բազմաթիվ տեսարաններ, իսկ արծաճագրություններից հնարավոր է այդ մարդկանց անուններն իմանալ: Տեսնում ենք, որ ամենաառաջին տեղում զինված ռազմիկն է, հետիոտնը կամ հեծյալը, որը պատրաստ է կռվի: Տեսնում ենք, թե արցախյան ծին ինչպիսի մարմնակազմություն ունի, որն անտառային տեղանքում պետք է շատ փոքր լինի, ճկուն, նույնիսկ կարող ենք պատկերացնել, թե ինչպիսի զինատեսակներ են օգտագործել, և ինչով է պատճառաբանված նման զինատեսակների ընտրությունը:

«Սա մի ունիկալ բան է, որ ողջ հայկական խաչքարային մշակույթում բնորոշ է նախ և առաջ Արցախին, ու մենք պարտավոր ենք այս ամենը մանրամասնորեն ներկայացնել»,- նշեց բանախոսը՝ անդրադառնալով նաև խաչքարային արձանագրություններին: «Եթե մարդու անունը Միսիթար է կամ Գարբին, Սիրադեղ ու այսպես շարունակ ավելի քան 50 ազգանուն խաչքարային արձանագրություններում, որոնք հասկանալի են միայն հայերին, ինչպես՝ կարող է դա լինել աղվանական: Մենք մեծ եզրակացություններ չենք արել, դրանք թողել ենք ընթերցողին: Ու պատասխանել ենք բոլոր նրանց, ովքեր թեկուզ թեթև, զավեշտի մակարդակով արծագանքել են: Ես կարծում եմ, որ պարտավոր ենք մեր մշակույթը նման մանրամասնությամբ, նման հիմնավորումներով, արձանագրական տեքստերի ճշգրիտ ընթերցումով ներկայացնել աշխարհին»,- պարզաբանեց զիտմակարը՝ հավատարմություն արտահայտելով, որ այդ ամենը երկար կրթական համակարգ է ենթադրում, ու իրենց թիմն ի վիճակի է դա անելու: «Հավերժությունը մշակույթին է բնորոշ, ոչ թե առանձին մարդկանց, մեզինք որևէ մեկը հավերժ չէ, բայց երբ տեսնում ես, որ ունես այն աշակերտները, որ քեզ հետ այսօր աշխատում են ու վաղը էլ շարունակելու են, կարծես ինքը էլ ես հավատում, որ այդպես է»,- թիմում ուսուցիչ-աշակերտի իրենց հարաբերություններն արձանագրեց պատմաբանը:

ԽԱՉՔԱՐԸ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՒՄ ԵՍՏԱՐՈՒՄ ԴԱՏԱՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Խաչքարային դաշտերը, որոնք հիմնականում միջնադարյան գերեզմանոցներ են, այդտեղ 60 նոր խաչքար են հայտնաբերել: Այս երկիրը լիքն է խաչքարերով, ընդ որում, ամբողջ հայ խաչքարային մշակույթում առաջին թվագրված խաչքարային արձանագրությունները ծագում են Արցախից: Դա Հակոբավանքն է, Վաղուհատում կան և այլուր:

Ի՞նչ է նշանակում խաչքար կանգնեցնել: Նշանակում է հավատել, որ տարածքը քաղաքականապես քեզ է պատկանում:

Համեմատության համար 3. Պետրոսյանը բերեց հետևյալ դրվագը. արաբները թույլ չէին տալիս հայ կաթողիկոսին խաչով թափոր գնալ: Որպեսզի կաթողիկոսը խաչը վերցնե, պիտի ոստիկանին դիմում գրեր, խնդրեր: Աշոտ Բագրատունուն երբ գովերգում են, ասում են՝ այդ Աշոտն այնքան քաջ էր, որ ուր գնում էր, չէր վախենում իր գրաստի վրա խաչ անրացնել: Խաչքարը տարածքի պատկանելության խորհրդանշանն է նախ և առաջ: Ու այսօր այս պատերազմում մենք տեսնում ենք խաչքարն ու տարածքը, խաչքարն ու թշնամուն: 3. Պետրոսյանի ուսանողներից մեկը «Պատերազմը և խաչքարը» թեմայով աշխատանք է գրել: Խաչը դառնում է բացարձակ խորհրդանշան: Բայց դա նոր բան չէ: Այսպես եղել է ու այսպես շարունակվում է:

ՏԱՊԱՆԱՔԱՐԱՅԻՆ ԴԱՏԱՆԵՐԱՔԱՆԴԱԿՆԵՐ

Գրքում առանձին մեծ բաժին հատկացված է տապանաքարային պատկերաբանակին, որը նույնպես բացառիկ մի բան է: Մի քանի հետազոտողներ երբեմն ասում են՝ եկեք տապանաքարերը համարենք մահացածների խնջույք: Եթե ժամանակակից տապանաքարերը, ժամանակակից հիշողությունը միայն տրամաբան, ափսոսանք են բերում, ապա հին

տապանաքարերին տեսնում ենք հորինվածքներ, որտեղ մարդիկ իրենց ընտանեկան ջերմությունն են ներկայացնում, իրենց երազանքը: Ու այս ամենը գրքում փորձել են մանրամասն փաստագրել:

3. Պետրոսյանը վերջում հատուկ շնորհակալություն հայտնեց ԿԳՄՍՆ-ին, ում գաղափարով նախաձեռնվել է գիրքը, թարգմանիչներին, ԴԲԸՄ-ին՝ աջակցելու համար:

«ԱՐՑԱՒԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԺԱՆԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԻ ԹԻՐԱԽՈՒՄ»



Սոխրենեսի «Օխտը դռնի» վանքը

Բանախոսն այնուհետև անդրադարձավ Հայկուհի Մուրադյանի համահեղինակությամբ «Արցախի մշակութային ժառանգությունը՝ հարձակումների թիրախում» իրենց գրքույկին:

Ի՞նչ է Արցախի մշակույթն առհասարակ, եթե ոչ բնության և մարդու գործունեության համադրություն: Արցախն ինքը տափաստանի և անտառի միասնություն է: Բնապատմական ինչպիսի՞ երկու հզոր՝ հնարավորություն ունենիք ու կորցրիք: Տափաստանը և անտառը ծաղկուն քաղաքակրթություն են ստեղծում: Բայց երբ քաղաքականապես տափաստանն ու անտառը առանձնանում են, ինչպես որ վերջին հարյուրամյակում էր, շատ դժվար է գոյատևելը: Եվ մենք փորձեցինք այս գրքում որպես ներածական ներկայացնել այդ գաղափարը, հետո անդրադառնալ հուշարձաններին:

Հաջորդ բաժնում այն է, թե ինչ է արել Ադրբեջանը 1920-ական թվականներից սկսած: Հետո գալիս են 60-ական թվականները, երբ փորձում էր ամեն ինչ համարել աղվանական: Եկրանին ցուցադրում է Ծարի եկեղեցիները: Այստեղ կան բեկորներ, որոնց նման երկրորդը չունենք: Բայց ադրբեջանցիները կտրտել են, դրել դպրոցների պատերի մեջ, այնուհետև սկադել: Գրքույկի հեղինակներն այդ բոլորը վավերացրել են: Ադրբեջանը Արցախի բոլոր այն տարածքներում, որոնք հայաբնակ չէին, բնաջնջել է այդ հուշարձանները, իսկ որոնք հնարավոր չի եղել, ամվանել է աղվանական, ռուսական՝ քրիստոնեական, և այդ քաղաքականությունը դրսևորվել է Նախիջևանում:

ԱՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համլետ Պետրոսյանի և Հայկուհի Մուրադյանի համահեղինակում Կ Ո Ւ Յ Մ Ա Ն Բ ստեղծված այս գրքույկը ներկայացնում է 20-րդ դարի ողջ ընթացքում հայկական մշակութային ժառանգության՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում թշնամու վերահսկողության տակ անցած կրթամշակութային ժառանգության պահպանության վերաբերյալ: Հեղինակների համոզմամբ այդ քաղաքականության դեմ քաղաքականությունը նույնպես պետք է ունենա հստակ հայեցակարգ ու սահմանված հստակ նպատակ, և այս առումով գրքույկը նմանատիպ աշխատանքների ակադեմիական հրատարակություններից է:



Ըստ Ա. Մուրադյանի, հայկական ժառանգության ոչնչացումը նոր երևույթ չէ: Ադրբեջանը իր ձևավորումից ի վեր նպատակ է հետապնդել բռնադատությունը, ոչնչացնել, սեփականացնել հայկական ժառանգությունը և դրա համար փնտրել ու գտել է տարբեր մեխանիզմներ ու մեթոդներ, ինչը հեղինակները փորձել են ներկայացնել գրքույկում: 44-օրյա պատերազմի ընթացքում ոչ միայն թիրախավորվել է քաղաքացիական բնակչությունը, այլ նաև այդ տարածքներում մշակութային, նյութական, անշարժ և շարժական ժառանգությունը: Եվ դրա ամենավառ օրինակը սուրբ Ղազանչեցոց եկեղեցու ռմբակոծումն է: Ի դեպ, սա այն դեպքն է, երբ ՅՈՒՆԵՍԿՕ-ն առաջին անգամ արձագանքեց այդ միջադեպին, առաջին անգամ հղում տվեց՝ ասելով՝ գերծ մնացեք ժառանգության թիրախավորումից, չնայած հորդորը հասցեական չէր, ուղղված էր երկու կողմերին էլ, այնուամենայնիվ, սա առաջին արձագանքն էր միջազգային կառույցների կողմից:

44-օրյա պատերազմի ընթացքում ռմբակոծվեցին Մարտունու մշակույթի պալատը, ոչնչացվեց Շուշիի Կանաչ ժամի գմբեթը: Դեպքերը բազմաթիվ են, Ա. Մուրադյանը փաստեց, որ նույններին



«Կանդի միաբանի» խաչքարը, լուս. 3. Պետրոսյանի:

9-ի հրադադարի ստորագրումից հետո վանդալային գործողությունները՝ ուղղված մշակութային ժառանգության ոչնչացմանը, առավել ինտենսիվ, առավել բացահայտ և ագրեսիվ դարձան: Հասկանալի է թիրախավորվում են Արցախյան ազատամարտին նվիրված հուշարձանները: Ադրբեջանը տարբեր պատրվակներով փորձում է ոչնչացնել մշակութային ժառանգությունը, և դրա մի օրինակ է նաև շինարարական աշխատանքների քողի տակ ժառանգությունը ոչնչացնելը, որին մերենք փորձեցինք արձագանքել առանձնապես արբանյակային լուսանկարների շնորհիվ: Եվ դրա օրինակներին հեղինակներն անդրադարձել են գրքում:

Վարչապետությունների հաջորդ ալիքն ուղղված է պատմական հուշարձաններին: Ադրբեջանական քաղաքականությունը ուղղված է օկուպացված տարածքներում հայկական հետքի ոչնչացմանը, որպեսզի ապացուցի իր լեգիտիմությունը տվյալ տարածքում ու այդ նպատակով ոչնչացնում է անգամ պատմական գերեզմանոցը, ինչպես օրինակ, Շուշիի, Սընախի, Մեծ Թաղերի և այլ պատմական գերեզմանոցներ:

Գրքում ներկայացված են միջազգային այն կոմիտեցիաները, եթիկայի կանոնները, հռչակագրերը, որոնք այս կամ այն չափով շոշափում են օկուպացված տարածքներում մշակութային ժառանգության պահպանության խնդիրները: Եվ վերլուծվել են հիմնականում այն կոմիտեցիաները, հողվածները, որոնք Արցախի դեպքում կարող են դառնալ կենսունակ, գործող մեխանիզմ Արցախի մշակութային ժառանգության պահպանության համար: Գրքում հեղինակներն անդրադարձել են նաև միջազգային մշակութապահպան կազմակերպությունների արձագանքին:

Այս գրքույկի առավելությունը նաև այն է, որ միայն մասնագիտական լսարանին չի ուղղ-

ված, բացի ակադեմիական լինելուց, նաև ցանկացած մարդու համար, որը հետաքրքրվում է Արցախի մշակութային ժառանգության պատմությամբ ու նրա ներկայիս ճակատագրով, կարող է դառնալ ինֆորմատիվ լավ աղբյուր:

Գիրքը բառալեզու է՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, հետևաբար, այս լեզուներով լսարանի համար այդ ինֆորմացիան դառնում է հասանելի, ինչը շատ կարևոր է ստեղծված իրավիճակում:

Monumentwatch.org

Նույնների 9-ի հրադադարից անմիջապես հետո երևանի պետական համալսարանի մշակութաբանության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը և Աննա Լեյլոյան-Եկմայանը (Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների պետական ինստիտուտ, Փարիզ) նախաձեռնեցին մի ծրագիր՝ կազմել Արցախի մշակութային ժառանգությունը հանրայնացնող ակադեմիական հարթակ: Նախապատրաստական աշխատանքները տևեցին շուրջ հինգ ամիս, ստեղծվեց բաժին՝ կազմված տարբեր մասնագետներից՝ ճարտարապետներ, հնագետներ, մշակութաբաններ, մեդիամոնիթորինգի մասնագետներ, թարգմանիչներ՝ 15 հոգուց բաղկացած թիմ, որն անմիջապես ծեռնամուխ եղավ այդ գաղափարին: Խուճըն ունի գործընկերներ, մարդիկ, ովքեր արբանյակային լուսանկարների միջոցով վերահսկում են, ու եթե կա որևէ նշան՝ վտանգ, սպառնալիք, անմիջապես ուղարկում են նշանակալից և մասնագետները վավերացնում են, դրա հիման վրա պատրաստում համապատասխան հոդված, որն անմիջապես թարգմանվում է անգլերեն ու ռուսերեն և հասանելի է դառնում աշխարհի բոլոր երկրներում հետաքրքրվողներին: Կան նաև այլ գործընկերներ ու աշակիցներ: 3. Պետրոսյանի այս նախաձեռնությունը հիմնականում կամավոր է: «Կաջակցեն թե չէ, մենք մեր գործը կանենք»,- ասում է նա, ու այս սկզբունքով էլ շարունակում են աշխատել:

Կայքը բաղկացած է երկու հիմնական բաժիններից: Առաջինը կոչվում է «Հնավայրեր և հուշարձաններ»: Այս մասում ներկայացած է 130 հուշարձան, որ այսօր գտնվում են ադրբեջանական օկուպացիայի տակ: Հուշարձանները ներկայացված են զուտ ակադեմիական սկզբունքները պահպանելով՝ չեզոք նկարագրությամբ. տեղեկատվություն, պատմական ակնարկ, մատենագրական ըմբռնություն, նկարագրություն, վերլուծություն, աղբյուրներ, որոնցից օգտվում են՝ պահպանելով հեղինակային իրավունքները:

3. Մուրադյանը շնորհակալություն հայտնեց ԱՂ ԿԳՄՍՆ-ին, որի շտեմարանից օգտվում են: Եվ առհասարակ, ցանկացած ոք, որ տրամադրում է լուսանկարներ ու համագործակցում է կայքի հետ՝ պահպանվում են նրա հեղինակային իրավունքները:

Այս հարթակում ամեն շաբաթ երկու հուշարձան ավելանում է, այսինքն՝ սա շարունակական գործընթաց է, ամենօրյա աշխատանք. հուշարձանները մանրակրկիտ միշտ դիտարկվում են, պահպանում են գիտական չափանիշները:

Հաջորդ բաժինը կոչվում է «Ահագանգեր»: 3. Մուրադյանն ասաց, որ իրենց մեդիամոնիթորինգի մասնագետները դիտարկում են բոլոր սոցիալական հարթակները՝ տիկ տոկ, փվիթեր. ինստագրամ, Ֆեյսբուք, յություբ: Դա ծանր աշխատանք է, դիտել, թե ինչպես են ադրբեջանցիները ոչնչացնում խաչքարերը, բայց ամում են, որովհետև դա իրենց պարտականությունն է: Ամեն դեպքում տեսանյութը վերցվում է, արխիվացվում է, պահպանվում ու թարգմանվում է: Դա թույլ է տալիս նրանց արագ արձագանքել ադրբեջանական հակահայ դրսևորումներին: Դա ինչ-որ կերպ արգելանք է, որ թշնամին զգուշանա որևէ հուշարձան ոչնչացնելուց:

Կայքն ունի «Քարտեզ» բաժինը, որտեղ բոլոր հուշարձանները, որոնք այսօր գտնվում են Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներում, հստակ կոորդինատներով նշված են քարտեզի վրա:

Առանձին կարևոր բաժին է նաև Արցախի սահմանային հուշարձանների մշտադիտարկումը, որի միջոցով մերենք կարողանում են վերահսկել սահմանային հուշարձանների իրավիճակը:



ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

ԱՆՏՈՒԱՑ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԴԵՊՈՒ ՀԱԿՈՐԱՎԱՆՔ


Ասկերանի շրջանի Իվանյան համայնքի Օճիկ Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի կուլեկտիվը տնօրեն Գուրգեն Դուլյանի գլխավորությամբ վերստին մի ուսումնական տարի ճանապարհեց սեփական տարեգրության գիրքը: Առօրյա հոգսերից, ավարտական քննությունների լարվածությունից, դժգոհակ քաղաքականությունից կտրվելու միտումը մեզ մի կարևոր միտք տվեց. շրջանի արհմիության նախագահ Գայանե Գաբրիելյանի աջակցությամբ կազմակերպեցինք էքսկուրսիա դեպի Հակոբավանք:

Նրան ու վանքը տեսնելուց: Կիսավեր է Հակոբավանքը, ինչպես իմ Արցախը: Տխուր է Հակոբավանքը, ինչպես Տեր Հովհաննեսն ու մենք: Բայց և այնպես խրոխտ ու վեհ է Հակոբավանքը, քանզի ամեն օր հայի աղոթքն է բարձրանում այնտեղ:

րը, ցույց է տալիս բազմաթիվ խաչքարերը, տապանաքարերը և արևի ժամացույցը: Խնդրում է զգուշորեն քայլել եկեղեցու ներսում, որպեսզի չվնասվեն նրա խոնավ պատերը: Եկեղեցու գմբեթի բացակայությունը անբարենպաստ հանգամանքներ

աաբար կտորել են խաչքարերը ոսկի գտնելու մոլուցքով տարվածները: Ցույց տալով պատերին գրած անգրագետ գրությունները, նա նշեց, որ մեծ է մանկավարժների դերը աշակերտների մեջ հայրենասիրական ու հայրենաճանաչողական որակների զարգացման գործում: Նրանք են տերը մեր սրբություններին: Զինվելով գիտելիքով՝ նրանք չեն ստրկանա ուրիշների ձեռքում՝ լինի ներքին թե արտաքին թշնամի: Ձերո՞ կլինեն որկրամուլությունից:

Հակոբավանքում՝ այն վերանորոգելու և նոր շունչ հաղորդելու նպատակով: Իսկ Դաղիվանքում մնացած իր համախոհներին թողել է ռուս խաղաղապահների հսկողության ու պաշտպանության ներքո: Նրա գերագույն նպատակն Արցախի անկախությունն ու հայեցի մնալն է: Մյուսը՝ Հակոբավանքի վերանորոգումը: Չի ցանկանում, որ այն լինի մի անձի օժանդակությամբ, այն պիտի կրի համաժողովրդական բնույթ:



Տարիներ շարունակ մասնակցելով հիմնադրամային մարաթոնների, մեր կառուցածը մվիրեցինք թուրքին:

Անհրաժեշտ է մշակել ծրագիր մեր պատմամշակութային կոթողի վերականգնման ուղղությամբ: Յուրաքանչյուրս մեր օժանդակությամբ մասնակցեցե՞ք Հակոբավանքի վերականգնման աշխատանքներին՝ դրանով ապացուցելով, որ մենք այստեղ ենք՝ մեր հայրենիքում, ամուր կառչած մեր հողից:

Առանց քաղաքակիրթ աշխարհի գոհարների՝ ինտերնետի, լույսի ու զգալի առկայության բովանդակալից ու հագեցած օր անց կացից թթու ջրի աղբյուրի մերձակայքում: Շուրջը խաղաղ էր, ու լսվում էին միայն թռչունների ծվլլոցն ու ջրի վշշոցը, և չկար տագնապ ապագայի համար:

Սա մի մեծ պատմական դաս էր բոլորիս համար՝ հուսադրող ու ոգեշնչող: Յուրաքանչյուրս մեր մտորումներով վերադարձանք առօրյա կյանքին և իրագրելիցինք, որ Բերդաձորի, Աղավնոյի և Սուսի հանձնելու լուրերը դեռևս իրական չեն, և հուսանք, որ մեր աղոթքներով ու կամքով կկարողանանք դիմակայել այդ արհավիրքին ևս:

**Հ.Գ. Որոշեցինք արձակուրդներից հետո կուլեկտիվով առաջինը մենք ներդրում կատարենք: Առաջարկում են մեր սիրելի «Լուսարար»-ին հանրությանը տեղյակ պահել դրամահավաքի և աշխատանքների ընթացքի մասին:**

**Մարիեդա ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ**  
**Թշակառու ուսուցիչ**

Խաղաղվեցինք հոգեպես, երբ Տեր Հովհաննեսը սկսեց ծանոթացնել մեզ Հակոբավանքի պատմությանը: Համառոտ ներկայացնեմ այն:

Հակոբավանքը հայկական վանական համալիր է, որը գտնվում է Մեծ Հայքի Արցախ նահանգի Մեծ Առանք (Ներքին Խաչեն) գավառում, ներկայումս Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղից 1,5 կմ ընկած մի անտառոտ լեռնաբազուկի վրա: Այն հայտնի է նաև Մեծառանքի վանք անունով: Նրա հիմնադրման և առաջին շենքերի կառուցման ժամանակը հայտնի չէ: Արձանագրություններից ամենահինը փորագրված է մի խաչքարի պատվանդանի վրա, որը հետագայում տեղադրվել է եկեղեցու պատի մեջ որպես շինաքար և վերաբերում է 851 թվականին: Մյուս գրավոր տեղեկությունը գտնվում է երևանի Ս. Մաշտոցի անվան Մատենադարանի հիշատակարանում առ այն, որ Սբ. Հակոբավանքի եկեղեցու կառուցողները եղել են Հասան Ջալալի ծնողները՝ Վահագնը և Խորիշահը: 17-18-րդ դդ. այն վերակառուցվում է Գրիգոր Եպիսկոպոսի ձեռամբ: Պատմում է Տեր Հովհաննեսը՝ իր մեղմ ձայնով մեզ տանելով պատմության խորքե-

րից մեկն է, որը բացասաբար է անդրադառնում ընդհանուր վիճակի վրա: Զգուշությամբ մտնում ենք Հակոբավանքի եռակամար սրահը, որն ընդհանուր է երկու եկեղեցիների համար ու իր բարձրությամբ հավասար է նրանց: Տեր Հովհաննեսը նշում է, որ այն եկեղեցիների ծավալային հորինվածքի օրգանական մասն է, իսկ սրահի եռակամար ճակատը՝ եկեղեցիների գլխավոր ճակատը: Համալիրի մեջ իր հատուկ տեղն ունի գավիթ ժամատունը, որը 10-րդ դարի շինություն է ու եզակի հանդիպող, քանի որ այն կից է փոքր եկեղեցուն և նրան միացած է 2,5 մ երկարությամբ միջանցքով: Ուրիշ ոչ մի վանք այդպիսի միջանցք չունի: Այն եկեղեցու հետ օգտագործվում էր ծեսերի համար, քանի որ աղոթասրահը փոքր էր, և չէր բավարարում նրա ներքին տարածությունը: Գավիթի տապանաքարերը վկայում են, որ այն ծառայել է որպես դամբարան: Այստեղ կան գերեզմանաքարեր, որտեղ հուղարկավորված են Ուհանես, Արիստակես, Սիմեոն կաթողիկոսները և Սիմեոն, Վարդան Եպիսկոպոսները:

Տեր Հովհաննեսը ցավով նշեց, որ մենք՝ հայերս, չենք գնահատում մեր հոգևոր արժեքները: Բարբարո-

**ԶԱԼՅԲՈՒՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԱՐՃԱՄԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ՀՈԳԵՎՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱՆՆՈՐԶՆԵՐ Է ՍԱՀՄԱՆԵԼ**

Ավստրիայի Զալցբուրգի համալսարանի քրիստոնեական արևելքի ուսումնասիրությունների կենտրոնի հայագիտության բաժինը՝ բաժնի վարիչ, հայագետ Ժասմին Դում-Թրագուտի նախաձեռնությամբ կրթաթոշակներ է սահմանել Արցախի հոգևոր-մշակութային ժառանգությունն ուսումնասիրող հետազոտողների համար:

2023 թվականի գարնանը սկսվող կրթաթոշակային նոր ծրագրի նպատակն է խրախուսել երիտասարդ հետազոտողներին՝ ուսումնասիրելու Արցախի մշակույթի և արվեստի պատմությանը վերաբերող թեմաները՝ առանձնահատուկ շեշտադրելով նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգությանը վերաբերող հարցերը:

Կրթաթոշակի առավելագույն գումարը 3000 եվրո է: Դրամաշնորհի շրջանակում հնարավոր է կազմակերպել նաև կարճաժամկետ կացություն Զալցբուրգում:

«Արցախի մշակութային հոգևոր ժառանգության վրա կենտրոնացած հայագիտական հետազոտությունների դրամաշնորհների» հայտերի ընդունման ժամկետը մեկնարկել է հուլիսի 1-ից, իսկ վերջնաժամկետը 2022 թվականի հոկտեմբերի 1-ն է:

Հետազոտությունների շրջանակն ընդգրկում է հետևյալ թեմաները.

- Հայագիտության ցանկացած բնագավառ (լեզու, պատմություն, մշակույթ, արվեստ, աստվածաբանություն, ազգագրություն, հնագիտություն և այլն)՝ կենտրոնանալով Արցախի մշակութային-հոգևոր ժառանգության վրա և շեշտադրելով միջառարկայական մեթոդներն ու մոտեցումները: Հատկապես ուղղունելի են հայագիտության հետևյալ ուղղությունները՝ ընդհանուր, պատմական և համեմատական լեզվաբանություն, տարածքային լեզվաբանություն, կոնտակտային լեզվաբանություն, բարբառագիտություն, ազգագրություն, արվեստ և ճարտարապետություն, ծեռագիր ուսումնասիրություններ (կողիկագիտություն), հնագիտություն, միջնադարյան պատմություն, վաղ ժամանակակից պատմություն, աստվածաբանություն, կրոնագիտություն և ոլորտին սերտորեն կապված այլ առարկաներ:

- Նախագծերը պետք է հիմնված լինեն հիմնարար հետազոտության, արխիվային կամ դաշտային աշխատանքի, ինչպես նաև արդի գիտական մոտեցումների ու տեսությունների վրա:

• Նախագծերը պետք է ունենան հստակ արդյունք՝ գիտական հրատարակման տեսքով:

- Դիմումի լեզուն պետք է լինի անգլերենը: Ծրագրի արդյունք(ներ)ը նույնպես պետք է գրված լինի անգլերեն կամ ցանկացած արևմտյան լեզվով: Նախագիծն ինքնին կարող է լինել հայերեն կամ այլ լեզվով (օրինակ՝ ռուսերեն, գերմաներեն, իտալերեն և այլն):

Կրթաթոշակային ծրագրին կարող են դիմել վերոհիշյալ առարկաների մինչև 35 տարեկան և արդեն իսկ գիտական ուսումնասիրության փորձ ունեցող շրջանավարտները, մագիստրոսներն ու ասպիրանտները:

Անհրաժեշտ փաստաթղթերի հետ պետք է ներկայացնել նաև ծախսերի բաշխման, ժամանակացույցի, աշխատանքային պլանի, ինչպես նաև հետազոտության հայեցակարգի վերաբերյալ տեղեկություններ:

Պայմանների և պահանջների մասին հավելյալ տեղեկությունների համար այցելել Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի գլխավոր էջ:



ՀՐԱԺԵՑ

ԲԱՐԻ՝ ԵՐԹ ԵՎ ԲԱՐԻ՝ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Միջնակարգ կրթության ատեստատ, այսինքն՝ կյանք մտնելու առաջին լուրջ վկայական...

Հաղորդի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցը հուլիսի 8-ին կրկին հուզումնառատ պահ էր ապրում...



բարձր պահեն Հաղորդի անունը և նրանց ուղեղներում միշտ նույն միտքը տրոփի՝ վաղ թե ուշ վերադառնալու ենք:

«Ես կցանկանայի, որ ձեր երեխաները, հետագայում նաև թոռները միջնակարգ կրթության ատեստատը ստանան իրենց բնօրրանում, և հավատացե՛ք՝ այդ օրը գալու է: Այդ օրը մոտեցնելու համար այսօր և հետագայում ձեզանից շատ բան է կախված»,-

տնօրեն Գայանե Գրիգորյանի այս խոսքերից հետո հանճարել Մեծ Լոռեցու «Ապրեք երեխեք, բայց մեզ պես չապրեք»- ի պես է հնչում նրա հաջորդ միտքը...



Սա՛ որպես պատվիրան: Իսկ առաջին բարեմադքանքն ուղղված էր դպրոցն ավարտած 28 հոգուց այն առաջին երկու տղաներին, որոնք նույնիսկ չհասցրին ընդունելության քննություններ հանձնել...

Սա՛ որպես պատվիրան: Իսկ առաջին բարեմադքանքն ուղղված էր դպրոցն ավարտած 28 հոգուց այն առաջին երկու տղաներին, որոնք նույնիսկ չհասցրին ընդունելության քննություններ հանձնել...

Նախնական քննությունները հանձնած՝ նույնպես համալրել են Պաշտպանության բանակի շարքերը, ատեստատները կստանան հարազատները: Իսկ ծառայության իրենց հերթին սպասող մյուս տղաները, որոնք ընդունվել են տարբեր ուսումնական հաստատություններ, բայց այս սեպտեմբերին դեռ չեն նստի ուսանողական նստարանին, քանի որ ամառային զորակոչով նույնպես կկանգնեն հայրենյաց պաշտպանների դիրքում...

Էլեն Միրզոյանը, որոնք հարվածային են, առաջինը տնօրենի ձեռքից ատեստատ ստացան: Այս հերթով մոտեցան մյուսները, տնօրենը յուրաքանչյուրին առանձնացնող խոսք ուներ: Նրանք ընդունվել են տարբեր տեղեր՝ մեկ հոգի Երևանի Բոլորտվի անվան համալսարան, մյուսները՝ Արցախի համալսարաններ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: Նատալյա Պողոսյանն ընտրել է մանկավարժությունը: Բոլորն իրենց ապագան տեսնում են Արցախում, համենայն դեպս մեր հարցումներին այդ պատասխանը ստացան: Ծնորհավորանքի խոսք ասացին շրջվարչակազմի ղեկավար Արթուր Բաղդասարյանը, ԿՍ բաժնավար Արթուր Մինասյանը, դասուղեկ Մելանյա Բաբայանը, ուսուցիչները: Նոր սերունդն առնվազն մի աստիճան բարձր պետք է լինի իրենցից, կարծում են նրանք:

Վերջին հրաժեշտն է դպրոցին, և պահն անմահացավ խմբովին լուսանկարով, իսկ տղաների հետ՝ առանձին, քանի որ, ինչպես ասացին, չի ստացվում բոլորով նույն անել զինկոմիսարիատի առաջ: Ասել է թե՛ հասունության ատեստատներ ստանալու պահը նաև տղաներին բանակ ճամփելու յուրօրինակ արարողություն էր: «Բարով անցնի ձեր ծառայությունը, խաղաղ պայմաններում, միշտ զոռն եղեք և բարով վերադառնաք»: սա էր գլխավոր մաղթանքը: Եվ տա Աստված:

Ս. ՎԱՔՐԻԵԼՅԱՆ

ԱՐԵՎԱՆՈՂ ՊԱՐՏԵՉԻ ՏԱՔ ԳՐԿՈՒՄ

Այս օրերին Ստեփանակերտի բոլոր և շրջաններում գործող որոշ նախադպրոցական հիմնարկներում միջին խմբի (4-5տարեկան) երեխաները հրաժեշտ տվեցին մանկապարտեզին: Սեպտեմբերի 1-ից նրանք կհաճախեն հանրակրթական դպրոցներին կից գործող նախադպրոցական խմբեր:



Իրենց կյանքի կարևոր այս շրջանը խաղ ու տաղով, ծափ-ծիծաղով եզրափակեցին Ստեփանակերտի հ. 2 պետական մանկապարտեզի ավելի քան 180 երեխաներ: Մանկապարտեզի բակում նրանց համար կազմակերպվեց գեղեցիկ հանդես: Միջին խումբն ավարտող յոթ խումբ երեխաները գրական հայրենո՞վ, ինչպես նաև՝ արցախյան բառ ու բանով, երգ-երաժշտությամբ, թատերականացված փոքրիկ ներկայացումներով ցուցադրեցին մանկապարտեզի տաք գրկում անցկացրած օրերում ձեռք բերած իրենց գիտելիքներն ու կարողությունները: Ինչքա՛ն ջանք ու եռանդ պետք է թափած լինեին նրանց դաստիարակները, պարուսույցները, երաժշտական ղեկավարները, ֆիզիկները, ինչու չէ՛ տնօրինությունն ու սպասարկող անձնակազմը մա-



նուկներին նման մակարդակի հասցնելու համար: Շուրջ մեկ ժամ տևած այս ներկայացումը մեծ բերկրանք պատճառեց ներկաներին՝ ԱՅ ԿՎՄՍՆ, Ստեփանակերտի քաղաքապետարանի ներկայացուցիչներին, ծնողներին, մանկապարտեզի՝ վաստակած հանգստի անցած աշխատողներին:



Երեխաներն իրենց ելույթներում խաղաղություն են ցանկանում աշխարհին, այդ թվում՝ մեր Արցախին: Նրանք մերժում են պատերազմը, ուզում են ապրել իրենց տներում, ցտեսություն են ասում իրենց արևաշող պարտեզին, երգվում են, որ չեն մոռանա նրան, մայրական գուրգուրանքով իրենց շրջապատած մարդկանց: Իսկ այդ մարդիկ նրանց սովորեցրել են սիրել հայրենիքը, ապրել ազնիվ: Նրանք, ի տարբերություն մեր «վայ հարևանների»- երեխաների մեջ չեն ներարկել ատելություն այլ ազգի, մասնավորապես ազգերու հանդեպ, չեն քարոզել բռնություն ու անմարդկային արարքներ, այլ՝ միայն սիրել գիրքը, հարստանալ գիտելիքներով, ազնիվ և արդար ծանապարհով շենացնել մեր երկիրը:

Երեխաներին բարի երթ մաղթեցին մանկապարտեզի տնօրեն Ռենա Բարխուդարյանը, ԱՅ ԿՎՄՍՆ նախադպրոցական բաժնի վարիչ Էլմիրա Հովհաննիսյանը: «Իմաստավորելով մեր կյանքը՝ առանց վերապահումի կարող ենք ասել, որ այն պայքար է հանուն մեր երեխաների երջանիկ ու պայծառ ապագայի»,- ասաց Է. Հովհաննիսյանը: Սեփ. լրատվություն

ՀՅՈՒՐԱՆԱԳԵՐ

ԵՐԹԵ ԱՐՅԱՆԻ ԹԱՏՐՈՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԲԵՄ Է ԲԱՐՁՐԱՆՈՒՄ, ԱՐԴԵՆ ԲԱՆԱԿՅՈՒՄ Է ԴՈՒՔ ՆՇԱԶՈՂԸ ՄԻ՝ ԻԶԵՅՐԵՔ

Մինչ պաշտոնական Երևանը սնանք խաղաղասիրությամբ, Հայոց պետականության հանդեպ անպատասխանատու վարքով, բոլորսեյան իր գրույցից հետո հայտարարում է, թե «օբյեկտի» հարցում «նշածող է իջեցնում», արժանապատվությունը չկորցրած «սուբյեկտն» ինքն է հասնում եվրոպական կենտրոններ, բեմ բարձրանում եւ մեզ բարձրացնում, անհուսությունն ու անելանելիությունը վաճում հրաշապատում, թե՛ իրապատում «Երկնքից երեք խնձոր ընկավ» 2,5 ժամանոց ներկայացմամբ...

նի այս բարբառի լեզվական սահմանները, երբ Արցախի կարգավիճակի մասին թշնամու լռելու պահանջին ի կատարումն Հայաստանից հաստատում են՝ Բերձորն ու Աղավնոն, այո՛, հանձնում են: Իսկ Բերձորից եւ Աղավնոյից պատասխանում են՝ ո՛վ է հանձնում, երբ իրենք չեն հանձնվում:

Հենց այս ծանր խոհերի, հայերիս դառնացած հոգու փակ, անլուսամուտ պատերի մեջ

տալիս Յասամանի դերակատար, թատրոնի երկարամյա դերասանուհիներից Ռուզան Գասպարյանը:

Ես չգիտեմ աշխարհի բոլոր հեքիաթասացներին, բայց համոզված եմ, որ Նարինե Արգաթյանի պատմածն իրապատում է:

Ես չգիտեմ անհավանականը հավանական, ավելին՝ շոշափելի դարձնող մարդկանց թիվը որքան է, բայց համոզված եմ, որ Կարինե Քոչարյանը նրանցից մեկն է: Նա գտել է Արցախին սատարելու, նրա արմատները վերջը դարձնելու ճիշտ սպեղանին, մանավանդ 44-օրյա պատերազմից հետո: Վերջին 29 տարիներից Նյու Յորքում բնակվող եւ ստեղծագործող դերասանուհի, ռեժիսոր եւ հեռուստամեկնաբան Կարինե Քոչարյանը ներկայացնում է բեմադրության պատմությունը: «5 ամիս Արցախում եմ եղել պատերազմից հետո: Երբ իմացա, որ Արցախի թատրոնը պատերազմից հետո գոյական վիճակում է հայտնվել, թե՛ գլխավոր ռեժիսորն էր գնացել Արցախից, թե՛ դերասանների շատերը, որոշեցի, որ անպայման պիտի գնամ եւ բեմադրություն անեմ»: Մտել է թատրոն, աշխատել դերասանների հետ, եւ որ առավել կարելու է, բեմից հաղորդակցություն ստեղծել հանդիսատեսի՝ հանրության տարբեր շերտերի միջև:

Հետպատերազմյան Արցախից առաջին լուսավոր շոյն էր Ստեփանակերտում ներկայացման առաջնախաղը, որի մասին տեղեկացանք Հասմիկ Պապյանի ֆեյսբուքյան ավետիսից:

Ինքն առաջինն էր հասել, իր գույք ձեռքի ծափը ընծայել, իր պայծառ հայացքով գրկել բեմում արարող մարդկանց: Ներկայացումը շատ ջերմ հանդիսատես էր ունեցել: «Բայց, մեր գրույցում նկատել է տալիս Կարինե Քոչարյանը, Հայաստանից Պապյանի գլխավորությամբ 4 հոգի էին եկել, իմ բարեկամները: Միայն»:

Կարինե Քոչարյանը շրջափակումից դուրս է բերել Արցախը, նրա պետական խորհրդանշանի ընտրել է մշակութապահպան, լեզվապահպան 90-ամյա կաճառը, որի սյուները դեռ կանգուն են, անցյալ տարի հասցրել է մախ՝ Երևան: Մեր երկրի բարձրաստիճան պաշտոնյաները, եթե հեռու, ապա միայն արտերկիր են մեկնում, իսկ նրանց ուղեկցող թիկնազորը բյուջեն հո չի մխի՝ տարբեր ուղեկալներով անցնելիք խիստ վերահսկվող ու բավականաչափ երկար ճանապարհն ընտ-

րելով հասնի Ստեփանակերտ, որ ներկայացման առաջնախաղ դիտի:

2021-ի սեպտեմբերի 17, 18, 19-ին Ստեփանակերտի դրամատիկական թատրոնը «Երկնքից երեք խնձոր ընկավ» բեմադրությունը ներկայացնում է Երեւանում, այնուհետ մարզերում՝ Արտաշատում, Գրազդանում, Գյումրիում, Վանաձորում: «Բացի Վանաձորից, որտեղ պաշտոնական ներկայություն չի եղել, թեպետ հրավերներ ուղարկվել են թե՛ ԿԳՄՍ նախարարություն, թե՛ Սփյուռքի հանձնակատարի գրասենյակ», - մեր գրույցում տեղեկացնում է Կարինե Քոչարյանը: Եվ նա 2021-ի դեկտեմբերից ի վեր աշխատում է մի թվացյալ անհավանական՝ Արցախի թատրոնի եվրոպական շրջագայություն կազմակերպելով:

Ամուր, չճկվող ողնաշար է, ընդօրինակելի վարք է, չէ՞: «Վահրամ Փափազյան» թատերախումբը Եվրոպայի 5 քաղաքներում բեմ է բարձրանում այն ժամանակ, երբ մարդիկ՝ օտար թե՛ արյունակից, «դե ֆակտո» եւ «դե յուրե» Արցախի ստեղծած հեքիաթ իրականությունը ոչ այնքան պաշտպանել, որքան հանդուրժել չեն ցանկանում:


Գերմանահայերի համար առավել տարօրինակ էր այն իրողությունը, որ հայաշատ Փարիզում ներկայացում չխաղարկվեց: Փորձում են բեմադրիչից պարզել իրականությունը: «Արցախի ներկայացուցիչը, որ սկզբում ասել էր, թե կօգնի, ավելի ուշ իրազեկեց, թե ժամանակ չունի, եւ այդքան աշխատանքից հետո պարզվեց, որ որտեղ տոմս չի վաճառվել, իսկ չի վաճառվել, քանի որ մարդիկ ուղղակի տեղյակ չեն եղել»:

Քյոլնում Արցախի թատրոնին ջերմորեն ընդունեցին Գերմանահայոց առաջնորդարանն ու համայնքայինները, Բեռլինում կազմակերպական հոգսը ստանձնել էր ԲԲԸՄ-ի տեղական կառույցը:

Թշնամու, պատերազմի, անորոշության սեւ ու սեւացնող ամպը չի կարող կուլ տալ բովանդակ երկինքը, եթե արեւը մեր աշխարհից դեռ չի հոգնել, երբ ամեն օր լույսը բացվում է թե՛ Հեռավոր Արեւելքում, թե՛ Արցախ աշխարհում, երբ արեւը գլորվելով դեպի մայրամուտ՝ դեպի Արեւմուտք, Արցախի վրայով է սահում: Բարձրից է երեւում Արցախը, մեր հրաշալի երկիրը, մեր սիրտն էլ այդ բարձր լեռներում է:

Չիջնենք անդուռը:

Անահիտ ՀՈՎՍԵՓՅԱՆ  
Գերմանիա, «Ազգ»



մեկ էլ երդիկ է բացվում՝ Քյոլնի Kulturbunker-ի բեմում 13 դերակատարով Հայաստանի ծերացող գյուղերի, Արցախի ճակատագիրը մարմնավորող խումբը հուշում է շենի հավերժության, մեր անվտանգության բանալին՝ պատերազմի ավերի դեմ սերն է գորավոր: Գյուղացիներից մեկը, որ կորցրել է կնոջն ու գավակներին, նորից է ամուսնանում, նրա առաջացած տարիքով կինը՝ Անատոլիան, զավակ է ունենում: Ծնունդն ու վերածնունդն են արցախցիների հույսը վառ պահում. հրաշքներ լինում են, եթե մարդն անձնատուր չի լինում, ճիշտ որոշմամբ դիմակայում, դիմազրավում է արհավիրքին: Պատերազմի ու մահվան երկյուղը հաղթահարելի է, երբ ծնունդ կա:

«Գիտե՛ս որքան խոխա ա ծնվալ պատերազմից հետո, նաեւ հենց էս պահին», - ներկայացման ավարտին ինձ գրկում եւ հույս է

ԲԱՅԵՔ ԶԵՐ ԴՈՆԵՐԸ, ԱՐՅԱՆՆ Է ԳԱԼԻՍ

Սերկայացման բեմադրիչ Կարինե Քոչարյանին հաջողվել էր ոչ միայն հերոսների համար ճիշտ դերասանի ընտրություն կատարել, այլև նրանց տալ իրենց կերտած կերպարներում ազատ ստեղծագործելու տարածք՝ հաշվի առնելով թե՛ գյուղական կյանքի կենցաղային մանրամասները եւ թե՛ գյուղացիների բարոյահոգեբանական վիճակը: Գեղարվեստական ձեւավորումից մինչեւ դերասանների հագուկապը, նրանց անմիջական խաղը բեմից դափն ձգվող տարածքը հանդիսատեսի համար դարձրել էին այնքան բնական, որ երբեմն թվում էր՝ ինքը էլ բեմադրության մասնակից ես:

Դերասանները տասներկուսն էին՝ Վալինկա-Լաուրա Հովսեփյան, Յասաման-Ռուզան Գասպարյան, Վասիլ-Մարատ Դավթյան, Անատոլիա-Օֆելյա Մարտիրոսյան, Հովհաննես-Մարտին Ալոյան, Մուկուչ-Քաջիկ Հարությունյան, Նաստասիա-Շողեր Մարգարյան, Մամիկոն-Սամվել Եվրիյան, Տիգրան-Էդվարդ Դավթյան, Սաթենիկ-Արմիդա Գաբրիելյան, հոգեւորական-Սամվել Սկրտչյան, լրագրող-Լենա Սա-

բեույան: Իհարկե, բոլորն էլ նմի-րումով էին խաղում, ձգտում էին դառնալ ներկայացման կարելու մասնիկը, բայց դերասանական այս խմբից կցանկանայի առանձնացնել կանացի դերակատարներից Լաուրա Հովսեփյանի եւ Ռուզան Գասպարյանի փայլուն խաղը, տղամարդ դերասաններից՝ Մարտին Ալոյանի եւ Քաջիկ Հարությունյանի կերտած բնական կերպարները: Իսկ գլխավոր հերոսները՝ Վասիլն ու Անատոլիան, լիովին կարողացան հանդիսատեսին փոխանցել իրենց կերպարների ապրած ողբերգությունը: Առանձնակի պետք է նշել նաեւ թատրոնի տնօրեն Արմեն Հարությունյանին, որն ապահովում էր ներկայացման տեխնիկական սպասարկումը:



պես են իրենց անձնական ցավը վերապրելով՝ բարձրացել բեմ՝ ցույց տալու, որ ոչինչ կորած չէ, որ կյանքը շարունակվում է, եւ Արցախը ապրում է:

Այդ մասին էր նաեւ ներկայաց-

ման սյուժեն, որը պատմություն է պատերազմից ու սովից հետո դատարկված լեռնային գյուղի մասին, որտեղ անհուսալի վիճակից նույնիսկ մարդիկ դուրս են գալիս, քանի որ հրաշք է տեղի ունենում, եւ 58-

միախուսվում են եւ դառնում մեկ պատմություն:

Բեմադրության ավարտին նաեւ կարճ գրույցի հրավիրեցինք բեմադրիչ Կարինե Քոչարյանին:

- Ինչն՞ Արցախի բեմադրության համար ընտրեցիք Նարինե Արգաթյանի գործը:

- Պատերազմից հետո տեղս չէի գտնում, խենթանում էի եւ որոշեցի գնալ Արցախ: Այնպիսի զգացողություն ունեի, որ հարազատս հիվանդանոցում մեռնում է եւ պետք է գնամ, հասնեմ: Մինչ գնալս դեռ ոչ մի ծանոթ չունեի Արցախում: Այդպես կապ հաստատեցի մարդկանց հետ եւ որոշեցի ներկայացում բեմադրել: Հաջորդը հարցը ծագեց, թե ինչ պիտե կարող ենք բեմադրել: Չէի կարող պատերազմի մասին խոսել, քանի որ այն նոր էր վերջացել, վերջը թարմ էր, եւ ինչ-որ տեղ շահարկում կլինեք, եթե պատերազմի թեման բեմ բարձրացնեինք: Ինչքան կարելի է մարդկանց վերքի վրա նոր վերք ավելացնել կամ էլ մի այլ սովորական պիես բեմադրել, կարծես թե ոչինչ չի եղել: Եվ Նարինե Արգաթյանի այս գործը՝ «Երեք խնձոր ընկավ երկնքից», որ նոր էի

ԱՐՑԱՆ-ԼՈՒԻ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ԵՐ ԱՆԱԿԵՐԴՈՒ ԹԱՏՐՈՆԸ

կարդացել (իրեն շատ եմ սիրում, քանի որ իսկապես բացառիկ գրող է), եկավ ու կարծես ընկավ իր տեղը: Այս գործում ամեն ինչ կա. եւ Արցախյան առաջին պատերազմը, եւ երկրաշարժը, սովը, մի խոսքով, ամեն բան, եւ ամենակարեւորը՝ հույսն ու ծնունդը: Դա խորհրդանշում էր, որ ինչի միջով էլ անցնենք, մենք այն ազգն ենք, որ պետք է նորից վերածնվենք, ինչպես հազարամյակներ շարունակ եղել է մեր պատմության մեջ: Ես կարծում եմ, որ դա ամենաճիշտ գործն էր՝ տրագիկոմեդիայի ընտրությունը: Ինչքան էլ ծանր է թեման, նրանց պատմությունների մեջ նաեւ հումորը կա:

**- Արցախյան բարբառը մտածված էիք ներմուծել, քանի որ գրքի արեւելահայերեն տարբերակում բարբառներ չկան:**

- Նախ դա Արցախյան չէր լինում, այլ ավելի Սյունիքի, Տավուշի, Լեռնային գյուղերի բարբառն էր: Մաքուր արցախյան բարբառը հանդիսատեսին անհասկանալի կլիներ: Իհարկե, սկզբում սցենարը գրական լեզվով էի պատրաստել, բայց երբ մեկնեցի Արցախ, ու սկսեցիք աշխատել, հասկացա, որ այս ներկայացումը գրական լեզվով ընկալելի չէր լինի, նաեւ արհեստական կհնչեր: Եվ այդ պատճառով ներմուծեցիք արցախյան եւ Հայաստանի տարբեր լեռնային գյուղերի բարբառը: Ի դեպ, երբ Նարինե Աբգարյանին հարցնում եմ, թե որ գյուղի մասին է գրել, նա ասում է, որ սարերի մեջ կորած ցանկացած գյուղ կարող է դրա նախատիպը լինել: Ես ուզում եմ ավելացնել, որ դա այն գյուղն է, որի մասին Փաշինյանն ասաց, թե սարերի մեջ, ծյան մեջ կորած մի գյուղ էր, կարելու էր, որ մերը մնա: Դա հենց այդ գյուղի մասին է:

**- Եթե ամփոփեք ձեր եվրոպական հյուրախաղերը, ի՞նչ տպավորություններով կկիսվեիք:**

- Ընդհանուր առմամբ հրաշալի տպավորություններով ենք մեկնում: Նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր քաղաքների մեր կազմակերպիչներին, որ կարողացան լավագույնս հյուրընկալել արցախցիներին: Ընդհակառակ եմ մեր դերասաններին, որ քաղաքից քաղաք երկար ճանապարհներ կտրելով, ամսալով հոգնածությամբ, կարողացան հրաշալի ներկայացումներ մատուցել: Ընդհակառակ եմ նաեւ հանդիսատեսին ջերմ ընդունելության, իրենց հուզված հայացքների, բուռն եւ հոտնկայա ծափերի համար: Իրենց ներկայությամբ նրանք ցույց տվեցին, որ արցախցիները մենակ չեն:


Չնայած բեմադրիչի հուզված ու զգացական արձագանքին, պետք է նշել, որ նրա վեց ամիսների տանջալից աշխատանքն ու եվրոպական շրջագայությունը կունենան իրենց դրական լիցքերը թե՛ Արցախում եւ թե՛ Եվրոպայում: Երբեք էլ հայերը չեն փայլել դասական երաժշտության կամ թատրոնի ու կինոյի սիրով, ռաբիսը միշտ հաղթել է ամեն ինչին ու ամենուր: Սակայն այն քիչը, որ հիմնված է եղել ազգային արժեքների վրա, նվիրյալ մարդիկ կարողացել են պահպանել եւ փոխանցել հաջորդ սերունդներին: Այդ նվիրյալներից են Կարինե Քոչարյանն ու Արցախի դերասանական խումբը, որ համարձակություն ունեցան հասնել Եվրոպա եւ ասել՝ մենք կանք:

Ապագայում Կարինե Քոչարյանը ցանկանում է թատրոնի հյուրախաղերը կազմակերպել նաեւ ԱՄՆ-ում ու Կանադայում: Մաղթում ենք հաջող ընթացք, իսկ մեր հայերնակիցներին՝ բարի վայելում:

Բացե՛ք ձեր դռները, Արցախն է գալիս:

**Հակոբ ԱՍԱՏՐՅԱՆ**  
**Վիեննա-Պրահա**  
**«Օրեր»**

Հուլիսի 5-ին և 6-ին հյուրախաղերով Արցախում էր Անակերդու քաղաքային թատրոնը: Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի մեծ դահլիճում բեմադրվեց «Ծապան» ներկայացումը՝ ըստ Պատրիկ Արտեմի (Պատվական Շաքարյան) համանուն պատմվածքի: Թատրոնի գեղարվեստական ղեկավար և այդ ներկայացման բեմադրող-ռեժիսոր Հրաչյա Պապինյանը, ողջունելով հանդիսատեսին, ասաց, որ դա Անակերդու թատրոնի 3-րդ այցելությունն է Ստեփանակերտ: Առաջինը 1995 թվականին էր Վ. Փափագյանի անվան թատրոնի շենքում՝ Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնությունը» և Գ.Ֆիգերեդոյի «Եզովպոս» ներկայացումներով: Ջերմ, հրաշալի կապեր հաստատեցին Ստեփանակերտի թատրոնի դերասանական կազմի հետ: Իսկ այն տարիներին մեր լեզունդար դերասաններ Մարգո Բալասանյանը, Բենիկ Օվչյանը, մյուս նշանավորները դեռ թատրոնում էին: Ամռոռաց էր հյուրախաղերի ավարտին հրաժեշտի ճաշկերույթը թատրոնի ծեմսարահում, որտեղ 70-80 դերասաններ էին հավաքված երկու թատրոններից:



Թեման արտագաղթն է. Հայաստանի փոքր քաղաքներից ու գյուղերից մարդիկ արտագաղթում են անընդհատ, ու այդ բնակավայրերը դատարկվում են: Ներկայացման ռեժիսորն անդրադարձել է նաև 44-օրյա պատերազմին: Ներկայացման հերոսը պղնձագործ Արամն է, որը պատրիկ

կարգվեն, պատերն ամրացվեն: Մարդիկ նման ձևով այգի, բանջարանոց են ստեղծել, բերք վերցրել: Ներկայացումը ծնվել է 2020թ. սեպտեմբերի 27-ի պատերազմից հետո՝ հայ ժողովրդին պատած դեպրեսիայի ընթացքում:



մեծացնում է զավակներին: Իսկ ամուսնու վերադարձից հետո ծապան եւ կառուցում, ծաղկուն այգի ստեղծում: Սակայն նրանց չորս զավակները մեծանալով, ինչպես գյուղի շատ երիտասարդներ, լքել են երկիրը, հաստատվել ռուսաստաններում և աշխարհի տարբեր երկրներում: Կնոջ մահից հետո Արամը մնացել է միայնակ: Ավստրալիայում ապրող նրա փոքր որդին հորը տանում է իր մոտ, համոզում, որ ընդմիջտ մնա այդ բարեկեցիկ երկրում, ի՞նչ կա այն ծորերում: Բայց հայրը չի համաձայնվում, վերադառնում է իր ծա-

զում հիշողություններ արելու առիթներ ունեցավ: Առանց հուզմունքի հնարավոր չէր տեսնել միայնակ մնացած տարեցիներին տվյալսանքները. «Աշխարհ, աշխարհ, ինչո՞ւ այսպես արեցիր»՝ նրանց մեղադրանքը համոզիչ չհամարում, քանի որ մեղավորությունը պետք է փնտրել ոչ թե աշխարհի՝



ուրիշների, այլ իրենց մեջ: Ներկայացումն ավարտվում է հուսադրող վերջաբանով: Ծապանում նաև երեխաներ կան, որ կշարունակեն Արամի գործը: Նրանք են հենց լինելու երկիրը շենացնողները, պաշտպանողները: Պետք է ապրել, պայքարել, շարունակել ստեղծագործել, արարել: Այդպես ապրելով պիտի ապրեցնեն երկիրը. սա է ներկայացման գաղափարը:

Ավելացնենք, որ Անակերդու թատրոնի այցը Արցախ կազմակերպվել է «Բեյք Մեթլս»-ի՝ «Վալ-լեքս Գրուպ»-ի կողմից իրականացվող մի ծրագրի շնորհիվ, որը կոչվում է «Արցախ-Լոռի բարեկամության կամուրջներ»: Ի դեպ, այդ ծրագրի շրջանակում Հայաստանում ապրող հազարավոր երիտասարդներ վերջին 10-15 տարիների ընթացքում եկել են Արցախ, կապվել այս հողի հետ, սիրել այն:

**Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

- Ես ուզում եմ Պարույր Սևակի խոսքերը մեքեբերել. «Ապրելու համար մեռել է հաճախ, սակայն մեռնելու մտադրությամբ չի ապրել երբեք»: Արցախը երբեք չի ապրել մեռնելու մտադրությամբ, ապրում է Արցախը, հալալ լինի ձեզ, որ այսօր իրական Արցախը բերեցիք: Ես պատերազմից հետո 4 անգամ եղել եմ Արցախում ու գիտեմ այն արցախյան համառ կամքը, այն համառությունը, այն կողը, որ մեզ պահել է այդ հողի վրա: Երեկ այս միտքը հնչեց. «Իսկ ո՞վ է ասել, որ Արցախը մեկ անգամ ենք ազատագրելու, նորից ենք ազատագրելու»:

Այո, այսօր վիրավոր է Արցախը, բայց Արցախը մեր պատմության ընթացքում շատ վերքեր է տեսել ու դարձյալ բանաստեղծի բառերով ասած՝ «ընկել է, սակայն երբեք չի ծնկել»:

Ուրեմն, չի ծնկելու Արցախը, և այսօր միայն Տատիկը ու Պապիկը չեն, մեր լեռները չեն, որ մեզ հարազատ են, Արցախը մարդիկ են, և մենք պետք է այդ մարդկանց կողքին լինենք, ապրենք, ապրեցնենք:

- Դուք մենակ չեք: Շուշիի համար իմ քրոջ միակ որդին՝ Գևորգ Արշակյանը, հենց պատերազմի առաջին օրը կամավոր ջոկատ կազմեց և Մատաղիսում էր ծառայում ու Մատաղիսը հռչակեց իր թագավորությունը: Մենք ծնունդով Արցախից չենք, բայց մենք Արցախը շատ ենք սիրում: Իսկ մեր տղան, որ Շուշիում նոյեմբերի 7-ին անմահացավ, մեզ հավերժ և ընդմիջտ կապեց Շուշիի և Արցախի հետ: Ընդհակառակը մեզ, որ ապրում եք այդ հողի վրա և հավատացած եղեք, որ Գևորգ Արշակյանը, որի հոգին այնտեղ է, չի թողնի ձեզ մենակ, մենք

ձեզ չենք թողնի մենակ ոչ միայն խոսքով: Կարծում եմ, այսօր շատ-շատերը որոշում ընդունեցին, որ պիտի վերադառնան Հայաստան, որովհետև մեր կայանը որևէ վայրում շատ հեղհեղուկ է:

Աշխարհը այսօր ցույց է տալիս, որ մենք որևէ տեղ ապահով և անվտանգ չենք կարող լինել, իսկ այսպիսի ուժեղ հայրենասերների կողքին, ինչպիսին եք դուք, որ ոչ միայն ապրում, այլև ստեղծագործում եք, որ ոչ միայն կարողանում եք ապրել, այլև ասել, որ Ադրբեյջանի կամ որևէ մեկի լծի տակ դուք չեք կարող ապրել, մեզ, նաև Հայաստանին ցույց եք տալիս, որ դուք եք մեր ապահովության բանալին և ուժը:

Կարինե Քոչարյանի էջից



ՕՐԱԽՆԴԻՐ

ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ՊՐԵՐԹ ԲՆԱԳԵՏ ԶԻ ՄՆԱՅԷԼ . ԲՐՊԵ ԱՌԱՋ ՊԵՏԷ Է ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ ԱՐՎԵՆ, ԵՎ ՌԻՍՈՒՅԶԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԷ Է ԴԱՌՆԱ ԱՄԵՆԱՅԱՆԿԱԼԻՆԵՐԻՅ՝ ՄԵՎԸ



«Մեդիալաբ»-ի հարցերին պատասխանում է «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի տնօրեն Վահրամ ՍՊՈՂՈՆՅԱՆԸ:

- Պարոն Սողոմոնյան, ուսուցիչների կամավոր ատեստավորման թեման շարունակում է մնալ ամենաքննարկվողը, չեն դադարում հակասական կարծիքներ հնչել, ուսուցիչների դժգոհությունը և չի դադարում: Ձեր տեսակետը կխնդրեմ ընդհանուր գաղափարի վերաբերյալ, ու արդյոք արդարացիված են ուսուցիչների դժգոհությունները:

- Քանի որ կամավոր ատեստավորումը կապ ունի ուսուցիչի աշխատավարձի հետ, արհեստակերպումն ավելի շատ ուշադրության է արժանացվում, քան պարտադիրը: Նշենք, որ պարտադիր ատեստավորման համար անցած տարի 7 հազար ուսուցիչ է վերապատրաստվել, այս տարի լինելու է 14 հազար:

Շատ լավ կլինի, որ հասարակությունը հետաքրքրվեր, թե ինչ որակի վերապատրաստումներ են անցնում ուսուցիչները ատեստավորվելու համար: Իհարկե, լավ է, որ ստուգվում են մասնագետների առարկայական գիտելիքները, բայց, կարծում եմ, պետությունը դա ստուգելիս պետք է հաշվի առնի, որ երկար տարիներ ուսուցիչների մասնագիտական զարգացման մեջ գրեթե ներդրումներ չեն արվել, այսինքն՝ մոտեցումը, թե «աղքատությունը աղքատների գլխի մեջ է», չպետք է տեղափոխել կրթության համակարգ, ուսուցիչները, որոնք մասնագիտական զարգացում չեն ապրել, շատ դեպքերում մեղավոր չեն, պետության մասնաբաժինը կա դրանում:

Պետությունը պետք է հասկանա, թե ինչ բովանդակությամբ, ինչ արժեքավորությամբ կարելի է նրանց վերապրոֆիլավորել, այսինքն՝ պատժիչ, հարկադրող մոտեցումներից պետք է հրաժարվել ու համագործակցել, որովհետև առանց այդ էլ ուսուցիչների ճգնաժամ ունենք: Կամավոր ատեստավորման համար կարևոր է, որ պայմանները, կանոնները հստակ լինեն, որպեսզի մասնակցող ուսուցիչները հասկանան, թե ինչն են ստուգելու:

- Հիմա ուսուցիչները չգիտե՞ն, թե ինչ է իրենցից պահանջվում կամավոր ատեստավորման ժամանակ:

- Կարծում եմ, որ անցած տարվա համեմատ այս տարի բարելավումներ են արվել, ու ավելի բնականոն գործընթացի ակնհաստես կլինենք, բայց չպետք է մոռանալ, որ, նախ՝ այդ ամենը պետք է զուգորդվի մյուս բաղադրիչներով՝ ուսուցիչ մեթոդաբանական կարողություններով, արժեքավորությամբ:

Ատեստավորման գործընթացին բազմաթիվ ուսուցիչների մասնակցել-չմասնակցելը պայմանավորված է տնօրենի հետ հարաբերություններով, այսինքն՝ ուսուցիչը կարող է իր դասաժամերից զրկվել, եթե ատեստավորման ժամանակ վատ արդյունք է գրանցում: Օրինակ՝ տնօրեն կա, որն ու-

սուցիչն ասում է՝ կարող եմ մասնակցել, բայց եթե ցածր ստանա, քո աշխատատեղի պահպանումը չեմ երաշխավորում: Նմանօրինակ կամայական բաներ են տեղի ունենում, կամ ուսուցիչն է մտածում՝ արժե՞ մասնակցել, եթե առանց այդ էլ ժամերը քիչ են: Կան կողմնակի գործոններ, որոնք ազդում են ուսուցիչի որոշման վրա, և չպետք է միայն ուսուցիչի վախերի հետ կապել ատեստավորմանը չմասնակցելու որոշումը:

- Պարոն Սողոմոնյան, կամավոր ատեստավորման անցողիկ շենք հաղթահարող ուսուցիչների համար նախատեսված ֆինանսական, այսպես կոչված, խրախուսման ձևը, որն ընտրել է նախարարությունը, ինչպե՞ս եք գնահատում: Արդյոք աշխատավարձերի այդչափ տարբերությունը չի՞ բերելու աշխատակազմի աններդաշնակ փոխհարաբերություններին:

- Շատ վատ է: Կա վտանգ, որ կարող ենք ստանալ այնպիսի պատկեր, ինչպիսին «Արարատյան բակլավիրիատ»-ում էր, երբ մեկ դպրոցում կարող են լինել բարձր ու շատ ցածր վարձատրվող ուսուցիչներ, իսկ դա շատ վատ է սոցիալական արդարության և ընդհանուր միջավայրի տեսանկյունից: Դպրոցը համագործակցային միջավայր է, ու արդյունքը կախված է բոլորի համագործակցությունից, եթե կա աշխատավարձերի, գիտելիքների կտրուկ խզում, ապա դա կարող է շատ վատ հետևանքներ ունենալ, հատկապես մեր չափորոշիչների առումով, երբ մենք գնում ենք վերառարկայական կարողունակությունների ձևավորմանը:

Պետք է համալիր մոտեցում որդեգրել, այն տարբերակը, որ հիմա քննարկվում է նաև տարակարգի մասով, պետք է լուրջ ուսումնասիրության ենթարկվի. ուսուցիչ մասնագիտական զարգացումն ինչպե՞ս է գնահատվելու, ինչպե՞ս է վերապատրաստվելու, չի կարելի դրսի փորձն ուղղակի, մեխանիկորեն փոխադրել, պետք է որակական խիստ մոնիթորինգ ունենանք:

- Կամավոր ատեստավորման անցողիկ շենք քչերին է հաջողվում հաղթահարել, ինչո՞ւ, նման ցուցանիշի իրական պատճառը ո՞րն է:

- Ընդհանրապես, անցած տարի շատ դժգոհություններ կային առարկայական թեստերի վերաբերյալ, նաև սկզբունքների տեսանկյունից են եղել տարբերություններ, ինչը ևս վկայում է, որ այսպես կոչված թեստերի, քննությունների մարմինը՝ Գնահատման և թեստավորման կենտրոնը, նույնպես ենթակա է բարեփոխման: Եթե ուսուցիչն ստուգում ենք հին մոտեցումներով, միզուցե պետք է նաև առարկային հարակից այլ կարողություններ ստուգենք, որն այժմ չկա:

- Եթե արդեն իսկ գոյություն ունի պարտադիր ատեստավորման համակարգը, կամավոր ատեստավորման համակարգի ներդրումը որքանո՞վ էր անհրաժեշտ:

- Ըստ տեղեկությունների, պետությունը գնում է այդ բոլոր համակարգերը համարելու և մեկ համակարգ ստեղծելու ուղղությամբ, ինչը, կարծում եմ, տրամաբանական է, բայց կարևոր է, թե ինչպիսին կլինի այդ համակարգը:

Բավականին լավ իրավական ակտեր են ընդունվում, լավ նպատակներ են դրվում, բայց Չայաստանում կա մասնագիտական ներուժի, նորարար մանկավարժական փորձագետների պակաս:

Նոր չափորոշիչ առավելություններն օգտագործելու համար մեզ պետք են լավ վերապատրաստողներ: Կախված նրանից, թե ինչ բովանդակությամբ, ինչ սկզբունքներով ու ձևաչափով կարվի այդ փոփոխությունը,

պարզ կդառնա՝ դա լինելու է ուղղակի ֆորմալ մի բան, թե՞ իսկապես որակական փոփոխություններ կառաջացնի, որովհետև վերապատրաստման գործընթացում ամեն դեպքում պետությունը պետք է ֆինանսական լուրջ ռեսուրսներ ներդնի:

Երբ ամենաբարձր մակարդակով ասում են, թե պատրաստ են կրթության ոլորտում ամեն բան ներդնել, դա նշանակում է, որ հատկապես ուսուցիչներին վերապատրաստողների մասով ներդրումներն արվեն, որովհետև միայն դպրոցի լավ շենք ու լաբորատորիաներ ունենալը բավարար չէ որակյալ կրթության համար, կրթության գլխավոր ներդրումը մեթոդը, նպատակն ու բովանդակությունն են, եթե այդտեղ ներդրում չլինի, իսկ պարտադիր ատեստավորման դեպքում մենք արդեն բարձրածայնել ենք, որ այդ 24 հազար դրամը շատ չնչին գումար է, ու դա է պա առը, որ էժանանում են այդ ծառայությունները: Այսինքն՝ վերապատրաստման համար ուսուցիչներն ընտրում են այն կազմակերպությունը, որն իրենց տանը մոտ է, իսկ դա նշանակում է, որ առաջնությունը չի տրվում բովանդակությանն ու որակին:

- Պարոն Սողոմոնյան, ընդհանրապես ատեստավորման գործընթացն ի՞նչ է տալիս մասնագետին, նպաստո՞ւմ է, օրինակ՝ ուսուցիչ գիտելիքների ավելացմանը, նորարարական մտածողությանն ու մեթոդաբանությանը:

- Կարծում եմ, որ պետության ու «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամի (ԿՁՆԱԿ) վերահսկողությունը, հատկապես որակի մոնիթորինգը բավարար չեն: Առաջին անգամ այս ֆորմատով անցած տարի է եղել, և մենք առաջարկել ենք, որ այս տարի գոնե ավելի լուրջ վերլուծություն արվի:

Մենք՝ որպես մասնակցային դպրոց, այդ պետական օրինակելի ծրագիրը վերցրել ենք ու փորձել ենք լրացուցիչ շեշտադրումներ ավելացնել՝ մասնակցային կառավարում, մասնակցային մշակույթ, նոր չափորոշիչի շատ տարրեր, այսինքն՝ մենք փորձում ենք նորարարությունները ներմուծել այդ ծրագրի մեջ ու հատկապես արժեքային բաղադրիչն շատ մեծ նշանակություն ենք տալիս՝ ուսուցիչ դիրքը դասարանում, ընդհանրապես կյանքում նրա արժեքավորագային պատկերացումները:

Օրինակ՝ մենք փորձում ենք սկզբունքային լինել կարևոր հարցերում, և ուսուցիչները, որոնք վերապատրաստման համար ընտրում են մեզ, ելնում են որոշակի բովանդակային հարցերից: Անցած տարի 475 ուսուցիչ ենք վերապատրաստել, իսկ այս տարի այդ թիվը մի քանի անգամ աճել է ու դեռ աճում է:

- Իսկ նախարարությունը ձեր կողմից արվող առաջարկությունները քննարկման առարկա դարձնո՞ւմ է, ընդունվո՞ւմ են դրանք:

- Թեև ոչ միշտ, բայց այս կառավարության լավ կողմերից մեկն այն է, որ բաց է շատ քննարկումների համար, ու եթե դու լավ առաջարկով ես հանդես գալիս, հիմնավորում ես այն, մեծ շանս կա, որ դա կարող է ընդունվել, ու, կարծում եմ՝ կարևոր է շահագրգիռ բոլոր կողմերի ակտիվությունը, բայց մյուս կողմից էլ կարևոր է, որ նախարարությունը քննարկման արդյունավետ հարթակներ ստեղծի, երբեմն որոշ որոշումներ շատ արագ են կայացվում, ու դրանց վրա ազդելու ժամանակ չի լինում:

- Դպրոցներում առկա այսօրեական ի՞նչ խնդիրներ կառանձնացնիք. ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում խզում կա՞:

- Գլխավոր խնդիրներից մեկը շատ անգամ քողարկված միջանձնային կամ կլանային որոշ հարաբերություններն են: Բայց կան նաև նորարարական մտածելակերպով ուսուցիչներ, տնօրեններ, որոնք փորձում են հարաբերությունները հիերարխիկից դարձնել հորիզոնական, հավասարը հավասարին քննարկումներ անել:

Դպրոցում փոփոխությունները նոր են սկսվում, ու շատ բան մինչ այս չի փոխվել, օրինակ՝ Երևանի կենտրոնում կան դպրոցներ, որոնք ընդհանրապես տեղյակ չեն, որ Չայաստանում նոր չափորոշիչ է ընդունվել: Դպրոցներում առկա ամենատար խնդիրը, ըստ իս, արժեքային խնդիրներն են, երբ ուսուցիչը կարող է խոսել մի բանից, բայց իր վարքով ցույց տալ լրիվ այլ բան, ինչը միանգամից կտրուկ է աշակերտին:

- Պարոն Սողոմոնյան, երիտասարդ կարգերին ի՞նչն է վանում դպրոցներից, որ նրանք չեն ցանկանում որպես ուսուցիչ աշխատել: Այս իրավիճակը շտկելու համար ի՞նչ պետք է արվի:

- Նախ պետք է բարեփոխել մանկավարժական կրթությունը: Բնագիտական ուղղություններով պետք է լուրջ ու շատ արագ որոշումներ կայացնենք, ժամանակը չի սպասում: Բնագետները պետք է տեսնեն, որ դպրոցը գրավիչ է, կարելի է այլ տեղ աշխատել, բայց նաև դասավանդել դպրոցում, այս որոշումները պետք է շատ արագ կատարվեն, որովհետև բնագետների առումով շատ լուրջ խնդիրներ ունենք: Օրինակ՝ Սյունիքում գրեթե բնագետ չի մնացել: Բույս առաջ պետք է բյուջետային հատկացումներն արվեն, և ուսուցիչ մասնագիտությունը պետք է դառնա ամենացանկալիներից մեկը: Առաջին խնդիրը հենց ֆինանսներն ու վերապատրաստումներն են:

Վերջերս Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնքի դպրոցում էի, այնտեղ 70-ականներից եղել է մաթեմատիկայի ակումբ, որը կապ է ունեցել եվրոպական երկրների գործընկերների հետ, փորձի փոխանակմանը են կիսվել, անգամ անդամատուն են ունեցել: Այդ ժամանակ ո՞չ Ֆեյսբուք է եղել, ո՞չ մանաթիպայլ այլ բան, բայց այդ դպրոցի ամբողջ պատը նրանց մասին նյութերով էր ծածկված: Այսինքն՝ ակնհայտ է, չէ՞, որ խնդիր է դրված եղել խրախուսել մասնագիտական գիտելիքն ու արվել է: Նույն կերպ հիմա պետք է դնել այդ խնդիրը, իսկ դնողը պետք է պետությունը լինի:

- Այդ խնդիրները չեն դրվում, որովհետև չկա՞ ֆինանսական միջոց, թե՞ ուղղակի ցանկություն չկա:

- Ֆինանսների նախարարությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա կրթության ոլորտում ծրագրեր իրականացնելու հարցում: Իմ տպավորությամբ՝ կրթության ոլորտում թե՛ հեղափոխությունից առաջ, թե՛ հետո ֆինանսների նախարարության խոչընդոտներն այդպես էլ չեն հաղթահարվել: Իհարկե, նաև լավ հայեցակարգ ձևավորելու խնդիր ունենք, բայց ամենակարևոր գործոնն այստեղ մասնակցային մշակույթն է:

Այն կապիտալը, որ կորցրել ենք, ու մեր պետությունն այս աղետների առաջ է կանգնել, հետևանքն է այն բանի, որ մարդկանց չեն սովորեցրել իրար հետ համագործակցել: Մեր համակարգը պետք է սովորեցնի մասնակցային, համագործակցային մշակույթ, ու ցանկացած խնդիր լուծելու համար պետք է ներգրավենք այն մարդկանց, որոնք կարող են նպաստել այդ խնդրի լուծմանը:

ՀՅՈՒՐԱՍՐԱԿ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՍԵՎԵՌԿԻ ԱՐՑԱՆԸ ՊԱՆԵԼՈՒ ԳԱՂԱՓԱՐԻ ՎՐԱ (Հարցազրույց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ հետ)



- Պարոն Եղիազարյան, որպես գրական անցուղարձին քաջատեղյակ գիտնական, ի՞նչ էք կարծում, մերօրյա հայ գրատարածքում գեղարվեստական արժեքավոր երկեր ստեղծվում են: Գրական գործընթացն, առհասարակ, ի՞նչ վեկտորներ ունի:

- Գրական կյանքը հարակա շարժման մեջ է, ամեն ժամանակ ունի իր հիմնական հարցադրումները, որոնք բխում են ազգային և համաժողովրդային գաղափարներից: Իմ կարծիքով, մեր ազգի համար անչափ կարևոր արցախյան հիմնախնդիրը պետք է դառնա գրական գործընթացի ամենակարևոր ուղղությունը: Ի վերջո, հայ ազգի համար Արցախի հայ մնալու և ինքնորոշման իրավունք ձեռք բերելու հարցը ճակատագրական է լինելու: Արցախյան իմ ընկերների հետ մեր բանավոր գրույցներում մշտապես ասել են, որ մեր օրերում հայությունը պետք է սևեռվի Արցախը պահելու գաղափարի վրա, ոչ թե ապրի Արևմտյան Հայաստանին տիրելու սին երազանքով. հայ հողի վրա ապրող հային պիտի ամուր պահել իր բնաշխարհում, որ չհայաթափվի մի բնօրրան ևս, ինչպես ողջ Արևմտյան Հայաստանը, ապա՝ Նախիջևանը: Պետք է սթափ մայել իրականությանը: Մեր գեղարվեստը՝ այդ թվում նաև գրականությունը, ծառայել է ծառայում է կորուսյալ հայրենիքի թեմային, բայց մենք, ցավոք, չենք գիտակցում, որ այդ հողը ոչ թուրքինն է, ոչ էլ այժմյան հայինը, դա մնացել է քրդերին, մեր պատմական հայրենիքի մեծ մասը բնակեցված է քրդերով, որքան էլ այն թուրքիա պետության սահմաններում լինի: Սա է ցավոտ իրականությունը:

Իսկ գրականությունը պետք է ծառայի ազգին՝ բացելու նրա աչքերը, ազգային փրկության ուղիները նշելու առաքելությամբ: Ինչպես բևեռացված է հասարակությունը, այնպես էլ բևեռացված է արդի գրականությունը: Գրողների մի խումբ կենտրոնացած է ազգային արժեքների պահպանման և ներթողման վրա, մի ստվար խումբ էլ գլոբալիստական քարոզչությամբ է զբաղված՝ ապագային դիրքորոշմամբ: Սրանք են իմ նկատած հիմնական երկու վեկտորները, որոնցից երկրորդն անընդունելի են համարում:

- Հաճախ է խոսվում Հայաստանում գրաքննադատության բացակայության մասին: Համաձայն էք նման ձևակերպման հետ: Դրա հիմնավորումը գեղարվեստական խտտան է, որ կարծեք գերակշռություն ունի գրական արտադրանքում:

- Գեղարվեստական խտտանը միշտ է եղել է, գրական քննադատությունն է, որ հարող որոմից պիտի գատի: Մեզանում, սակայն, ձևավորվել է մի վատ երևույթ. գրահրատարակչական բիզնեսը սկսել է կենտրոնանալ որոշ մարդկանց ձեռքին, որոնք սնվում են ինչպես դրսի դրամաշնորհներից, այնպես էլ հաջողեցնում են պետական միջոցներ, որով զարկ են տալիս գլոբալիստների գաղափարական քարոզչությանը, մինչդեռ ազգային և համաժողովրդային բարձր արժեքներ կրող գրականությունը մնում է առանձին անհատների հոգածության առարկան: Պետությունը այստեղ ձեռքերը վազել է: Այս առումով գրական քննադատությունը ևս ոչ հաճելի վիճակում է: Դեռ տասնամյակներ առաջ Հրանտ Մաթևոսյանը ցավով արձանագրեց գրական քննադատության ոչ երանելի վիճակը: Սակայն հարկ է փաստել, որ գրական քննադատությունը մեռած չէ, ինչն ասելու հրապարակ են գալիս ժենյա Քալանթարյանի, Դավիթ Գասպարյանի, Սուրեն Աբրահամյանի, Արմեն Ավանեսյանի և այլոց գրաքննադատական հոդվածներն ու գրքերը: Բայց գրական քննադատության ոչ բավարար վիճակն ինձ մղեց անդրադարձներ անելու արդի գրականությանն ու գրականագիտությանը, և ծնվեցին «Արդի գրականություն և գրականագիտություն» գրքի երկու հատորները, երրորդն ընթացքի մեջ է:

Մասնավորապես, Ա հատորի առաջաբանում գրել են. «Արդի գրական քննադատությունը մասամբ հիվանդ է, գրական միջավայրը՝ բևեռացված: Ոմանք իրենց հռչակել են գրական միջավայրի հեղինակություններ, աջ ու ախյակ քամահրում են, բացասում կամ ընդհակառակը՝ բաժակաճառեր հնչեցնում՝ որպես գրախտություններ: Ինքնահռչակ տաղանդները սեփական բիզնես շահերով առաջնորդվելով՝ կարող են ոչ գեղարվեստական երկը հանրահռչակել որպես տաղանդի փայլատակում, մինչդեռ ստվերում կարող է մնալ գեղարվեստական բարձրարժեք գործը: Ավելին՝ գրականագիտական հորջորջված հողավածներում հաճախ չեն գտնում գիտական նորություն, գրականագիտական մեթոդ, գիտական եզրակացություն, գիտական մետալեզու և այլն:

Այս և այլ մտահոգություններով էլ ծնունդ է առել սույն մենագրությունը, որի ուսումնասիրման խնդիրն արդի գրականությունն ու գրականագիտությունն է, այլ խոսքով՝ ընթացիկ գրական միջավայրը: Մեր նպատակն է հողվածների տեսքով ներկայացնել արդի գրականության զարգացման ընթացքը և գրականության ուսումնասիրման գիտական հայեցակարգը՝ փորձելով ամբողջացնել խնդրի գիտական դրվածքը: Մեր խնդիրն է պարբերաբար և շարունակաբար արձագանքել գրական ընթացքին՝ գրախոսելով ինչպես առանձին գրողների գրքեր, այնպես էլ ընթացիկ գրաքննադատական ուսումնասիրություններ:

Մեր ուսումնասիրության համար հիմք է ծառայել հիմնականում արժեքաճանաչող (աքսիոլոգիական) մեթոդը, որը գրական երկի կամ գրականագիտական ուսումնասիրության արժանիքների և թերությունների օբյեկտիվ ու հավասարակշիռ գնահատումն է:

Ինչպես տեսնում եք, ինքն էլ գոհ չեմ եղել արդի գրական քննադատությունից, և նույն վերաբերմունքն է անգամ իմ երկխոսորդ աշխատության գոյության պարագայում ևս: Ինչ վերաբերում գրական խտտանին, ապա ոչ ոք չի կարող մարդուն ստիպել, որ չստեղծագործի, թեև մնան մի ոչ հաճելի փորձ արվել է գրաքննադատության մեջ: Տվյալ դեպքում գրաքննադատը հստակ հարցադրում է անում, թե ինչու են ստեղծագործում այս գրողները՝ նշելով մարդկանց անուններ, որն ինձ համար ընդունելի չէ: Մարդն ազատ է, և նրա ստեղծագործելու ցանկությունը չի կարող արգելել որևէ գրաքննադատ: Քննադատի դերը լավը վատից զանազանն է: Մինչդեռ մեզանում գրահրատարակչական բիզնեսը սերտաճում է գրաքննադատությանը, և արդյունքում երիտասարդ սերնդի գրաքննադատներից ոմանք հանդես են գալիս իրենց բիզնեսի շահերի դիրքերից՝ կորցնելով օբյեկտիվությունը: Սա իսկապես մտահոգիչ փաստ է երկու առումով. մախ՝ տվյալ գրաքննադատը վտանգում է իր մասնագիտական հեղինակությունը, ապա՝ արդի գրականության երկը ճիշտ չի արժևորվում:

- Բացի ճանաչված գրականագետ լինելուց՝ նաև ինքնեղ ստեղծագործում եք. ո՞ր ժանրերն եք համարում այսօր առավել պահանջված:

- Թեև մի հեքիաթ-վեպ են ստեղծել և հակիրճ պատմվածքների մի ժողովածու են հրատարակել, սակայն կարծում եմ, որ պոեզիան և փոքրիկ պատմվածքները կամ ակնարկներն ավելի են պահանջված մեր ժամանակներում, քանի որ ընթերցողն այս հարահուսի մեջ քիչ ժամանակ է գտնում գրականություն կարդալու:

- Գաղափարակիր լինելը, հատկապես նոր աշխարհաքաղաքական իրողությունների համապատկերին, խանգարում է գրողին, թե՞ շեղում է նրան բուն խնդիրներից:

- Առանց գաղափարների չկա գրականություն, ի վերջո, գրականությունը մարդկային կյանքն է՝ դրված գեղարվեստական պատկերի մեջ: Գրողը փորձում է վերափոխել իրականությունը՝ ստեղծելով աշխարհի իր մոդելը, իսկ գրականությունը մարդու կողմից մարդկանց համար ստեղծվածն է: Ամեն դեպքում գրականության կենտրոնում մարդն է՝ իր գաղափարներով ու հույզերով:

- Ձեր հայագիտական ուսումնասիրություններում զգալի տեղ եք հատկացնել նաև Արցա-

խին: Բավարա՞ր եք համարում արցախյան թեմաներով անդրադարձերը հայ և այլազգի գրողների ու հետազոտողների կողմից:

- Տեղին է Ձեր դիտարկումը, իմ հայագիտական ուսումնասիրություններում, ինչու ոչ՝ նաև իմ պատմվածքներում ես գիտակցված մեծ տեղ եմ հատկացրել արցախյան թեմային: Սա ոչ միայն բացատրվում է նրանով, որ մախնիներս 18-րդ դարի վերջերին Լոռի են գաղթել Արցախից, այլև իբրև հայ մարդ՝ գիտակցում եմ, որ մեզ համար այս պատմական ժամանակաշրջանում ազգային ամենաառաջնային հարցը Արցախի ճակատագիրն է, որից մեծապես կախված է նաև Հայաստանի ապագան:

- Արցախի հետ գիտական ու ստեղծագործական ի՞նչ կապեր ունեք: Հաճա՞խ եք լինում այստեղ:


- Արցախն ինձ համար ուրիշ աշխարհ է, որտեղ ապրում և ստեղծագործում են ինձ հոգեհարազատ շատ ընկերներ, որոնց մեջ հատկապես առանձնանում են Լեռնիկ Հակոբյանն ու Կիմ Գաբրիելյանը, իսկ ավագ սերնդից՝ Սուրատ Խամյանն ու Վարդան Հակոբյանը: Չափազանց բարձր են գնահատում նաև մեկ այլ ընկերոջ՝ Լեզվաբան Արմեն Սարգսյանի բանագիտական ժառանգությունը և հունորի բարձր զգացումը: Արցախն ինձ կանչում է, Արցախն ինձ համար նաև այս մարդիկ են, որոնց հետ հաճախակի շփվում եմ ոչ միայն հեռաձայնելով, այլ անձամբ այցելելով և վայելելով նրանց հյուրընկալությունը՝ նաև գրական բանախոսությամբ:

- Վերջին՝ ավանդական հարցը. ի՞նչ կմադքե՞նք արցախցիներին:

- Արցախցիներին պիտի մաղթեմ հաստատակամություն, համառություն, անկոտրում կամք, որն առավել քան բնորոշ է հենց արցախցուն: Օրերս խոսում էի արցախցի մի ընկերոջս հետ, որ Ասկերանում շինարարություն է սկսել՝ արդեն, ցավոք, հենց թուրքի քթի տակ: Սա ինձ ոգևորեց, ես հասկացա, որ արցախցին չի կոտրվել, որ նա հաստատակամ է անգամ այդ ծանր վիճակում: Մի նկատառում ևս. համացանցում հաճախ են կարդում, ցավոք, նաև մոտ ընկերների գրառումներում, թե ում է պետք Արցախը: Ավելին՝ այդ այսպես կոչված ընկերները փոխանակ աջակից լինեն դժվարությունների մեջ հայտնված իրենց արցախցի ընկերներին, երբեմն նաև վիրավորական արտահայտություններ են թույլ տալիս նրանց հասցեին, որը նույնպես ինձ համար անընդունելի է: Դա ազգային դավաճանություն է, որով փորձում են հային տարանջատել՝ հայաստանցի և արցախցի անվանելով: Ուստի մաղթում եմ մեր մատենագիրների կողմից Փոքր Սյունիք անվանված Արցախ աշխարհին՝ վերամիավորելու Մեծ Սյունիքին՝ հայրենիքին:

Հարցազրույցը վարեց Սվեդլանա ԽԱԶԱՏՐՅԱՆԸ

ՍԻՐԵԼԻ ՄԱՆԿԱՎԱՐԹԻՆ՝ ՎԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳՍԻ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄ



Օրերս Խնուշինակի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ հրաժեշտի միջոցառում, որի անմիջական կազմակերպիչներն էին տնօրեն Ն. Հայրապետյանը, դաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչ Գ. Արիբաբայանը և դպրոցի ողջ կուլեկտիվը: Ամառային այս ջերմ օրը շատ հուզումնալից էր և անակնկալներով լի: Բոլորը վաճառվել էին հրաժեշտ տալու վաստակաշատ ուսուցչուհի Էլեոնորա Յախշիբեկյանին, որը տարիների ավանդ ունի այս դպրոցում և քայլ առ քայլ, բոլոր առ բոլոր եկել հասել է այս կետին: Հավաքվածները՝ թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները, արցունք-

աշխարհում ու երախտագիտությամբ լցված իրենց խոսքն ու շնորհակալական ուղերձը հղեցին սիրելի ուսուցչուհուն: Հրավիրված էին նաև թոշակառու ուսուցիչները, ովքեր նույնպես իրենց սրտի խոսքն ուղղեցին Է. Յախշիբեկյանին: Իսկ շրջվարչակազմի ԿՍ բաժնի վարիչ, Վ. Հակոբյանը մեծ հպարտությամբ գնահատեց ուսուցչուհուն՝ հանձնելով նրան շնորհակալագիր: Աշակերտների կողմից հնչեցված մեծարման խոսքերը, գեղեցիկ և անկեղծ երախտագիտության բառերը շատ կարևոր են յուրաքանչյուր ուսուցչի համար, որովհետև նա զգում է, որ իր դասերն իզուր չէին, որ դրա

հիմքի վրա կմեծանա կայուն ու արժանի մարդ: Այդպես էլ ընկ. Յախշիբեկյանը տարիների ընթացքում դասավանդել է ոչ միայն մաթեմատիկա, այլև եղել մարդու ձևավորման բարդ գործընթացի մեջ: Այդ են վկայում միջոցառման ժամանակ հնչած նրան նվիրված ասմունքն ու սրտից բխած խոսքերը: Ու բոլորն էլ հասկանում էին, որ ուսուցչի բազմաչափ արժեքները անգնահատելի է: Սիրելի՛ ուսուցչուհի, թող անվտանգ ու կայուն հայրենիքում վայելես քո վաստակած հանգիստը:

Խնուշինակի միջն.դպրոց

ՄԱՐԶԱԿԱՆ

ՔԻՔ-ՔՐՔՍԻՆԳԻ ԲԱՅ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

Հունիսի 28-30-ը Ստեփանակերտի քաղաքապետարանի եւ քիք-բոքսինգի ֆեդերացիայի համատեղությամբ 11-րդ դպրոցում կայացավ քիք-բոքսինգի ՄՊՄԴ-ի պլանային բաց առաջնությունը: Մասնակցում էին մինչեւ 16 տարեկան շուրջ 80 մարզիկներ՝ Ստեփանակերտի մարզադպրոցի քիք-բոքսինգ պարապող սաներ, Արցախի վինգզու-քունգֆուի ֆեդերացիայի մարզիկներ, Սյունիքի մարզի Կապան քաղաքի մարզադպրոցի քիք-բոքսինգի մարզիկներ: Կապանի մարզադպրոցի մարզիկները ներկայացել էին Սյունիքի մարզի քիք-բոքսինգի ֆեդերացիայի նախագահ, վաստակավոր մարզիչ Արա Սարգսյանի գլխավորությամբ:

Մարզիկներն առաջին օրը մասնակցեցին կշեռքի արարողությանը, որին հաջորդող օրերին մասնակցեցին մենամարտերին եւ պարզեւատրման արարողությանը:

Առաջնությանը ներկա էին Ստեփանակերտի քաղաքապետարանի ներկայացուցիչներ, ԿԳՄՍ նախարարության սպորտի ոլորտի պատասխանատուներ, հյուրեր, ծնողներ եւ մարզիկներ: Առաջնության գլխավոր մրցավարը վինգզու-քունգֆուի ֆեդերացիայի նախագահ, ՄՊՄԴ-ի վինգզուի մարզիչ Սայաթ Բաղդասարյանն էր, ռեֆերին (մրցավկա)՝ քիք-բոքսինգի ֆեդերացիայի գլխավոր մարզիչ Արմեն Դահրամանյանը:

Առաջնության գլխավոր մրցավար Սայաթ Բաղդասարյանը մեզ հետ ունեցած զրույցում ասաց, որ մրցումներին մասնակցելը մեծացնում է մարզիկների փորձը, ինչն էլ դրական է ազդում նրանց մարզական առաջընթացի վրա: Կազմակերպված առաջնությանը մասնակցում էին նաեւ սկսնակ մարզիկներ: Առաջնությունը հնարավորություն տվեց բացահայտելու, որ սկսնակների մեջ էլ կան խոստումնալից մարզիկներ: Լավագույն արդյունք ցուցաբերած մարզիկներն առաջիկայում կմասնակցեն Երեւանում կայանալիք քիք-բոքսինգի միջազգային առաջնությանը: Թե ինչով է կարելի մարզիկների համար առաջնություններին մասնակցելը, պարզաբանել է Ս. Բաղդասարյանը. «Մրցույթների մասնակցելով՝ մարզիկը ձեռք է բերում մենամարտ վարելու փորձ: Նա հնարավորություն է ստանում ստուգելու իր ուժն ու կարողությունները, դրանով առաջ գնալու մեծ հնարավորություններ են բացվում մարզիկի առ-

ջեւ. լավագույն մարզիկները հրավեր են ստանում ուրիշ պետություններում մենամարտերի մասնակցելու»:

Իսկ թե ինչ գործառնություններ են բաժին հասնում մրցավարներին ու մարզիչներին



առաջնությունների ժամանակ, կրկին պարզաբանում ստացանք Ս. Բաղդասարյանից. «Մրցավարներն ստուգում են եւ բացահայտում մարզիկների հնարավորությունները: Մրցավարները պետք է լավ տիրապետեն մարզաձեւի եւ մրցման կանոններին: Պարապմունքների ժամանակ մարզիկներն ավելի շատ ընկերներ են, իսկ մրցույթի ժամանակ՝ մրցակիցներ, ինչը թույլ է տալիս, որ մրցույթների ժամանակ մարզիկն իր կարողություններն օգտագործի հարյուր տոկոսով: Կան մարզիկներ, որոնք մարզումների ժամանակ կաշկանդված են լինում, բայց մրցաշարերում ակտիվ են իրենց դրսևորում, սակայն լինում է նաեւ հակառակը: Մարզիչն իմանում է իր սաների հնարավորությունները: Առաջնությունները հնարավորություն են տալիս, որ մարզիչը վերահանի, թե մարզիկների որ կողմերի վրա է պետք ավելի շատ աշխատել»:

Արցախում շատ պատահներ են հետաքրքրված քիք-բոքսինգ մարզածելով: Մանկապատանեկան մարզադպրոցի շուրջ 100 ան մարզվում է այս մենապայքարային մարզաձեւով: Քիք-բոքսինգի Արցախի ֆեդերացիայի նախագահ, քաղաքապետ Դավիթ Սարգսյանի

կամ մարտարվեստով, այնպես էլ քիք-բոքսինգով պարապելը մարզիկի մեջ ձեւավորում է կարգապահություն, ֆիզիկական առողջություն, հուզական հավասարակշռություն, քանի որ մարզումների ժամանակ բացասական էներգիան դուրս է գալիս մարզիկի միջից, նա դառնում է հանգիստ ու հավասարակշռված, պատասխանել է Ս. Բաղդասարյանը եւ մեկնաբանել նաեւ, թե ինչու են վինգզուի մարզիկները մասնակցում քիք-բոքսինգի առաջնությանը: Վինգզուով մրցույթներ քիչ են կազմակերպվում ոչ միայն Արցախում, այլև ընդհանրապես աշխարհում: Վինգզուն պարապում են ոչ թե մրցելու, այլ հիմնականում ուժային կառույցներում մարտիկներ պատրաստելու կամ ռեալ կյանքում ինքնապաշտպանվել կարողանալու համար: Վինգզուն վնասվածքավտանգ տեխնիկա ունի: Վտանգավոր հնարներ պարունակելու պատճառով մրցումները նախ՝ քիչ են կազմակերպվում, իսկ մրցույթի կանոններն էլ թույլ չեն տալիս վինգզունը լիարժեք օգտագործել:



կողմից էլ արվում է հնարավորը, որ Արցախի մարզիկներն ունենան պատշաճ մարզվելու բոլոր հնարավորությունները:

Քիք-բոքսինգը հիմնված է ձեռքի եւ ոտքի հարվածային տեխնիկաների վրա: Քիք-բոքսինգը տարածված մարզաձեւ է, որով աշխարհում կազմակերպվում են մենամարտեր 3 մրցակարգով լող քիք, քիք լայթ, K-1 ֆուլ ռո, որոնք իրարից տարբերվում են ըստ կանոնների: Ի՞նչ հատկություններ է զարգացնում քիք-բոքսինգը պատանի մարզիկների մեջ: «Ինչպես ցանկացած սպորտաձեւով

Բայց մեր սաների մոտ նկատվում է մրցակցության ոգի, մրցումների մասնակցելու ցանկություն, դրա համար մենք չենք սահմանափակվում միայն վինգզուի մրցումների մասնակցելով, որոնք հաճախակի չեն կազմակերպվում: Մեր մարզիկները կարող են, այսինքն՝ ի վիճակի են մասնակցել բոլոր հարվածային մարզաձեւերով անցկացվող մրցումներին: Քիք-բոքսինգի եւ Սանդա ուշուի ֆեդերացիաների հետ ենք ավելի շատ համագործակցում: Վինգզուի մարզիկները, մասնակցելով կազմակերպվող առաջնություններին, ստանում են մրցելու մեծ փորձ»: ՄՊՄԴ-ի քիք-բոքսինգի բաց առաջնությանը մասնակցած մարզիկներից 17-ը զբաղեցրել է առաջին տեղ, 18-ը՝ երկրորդ տեղ, իսկ 20 մարզիկ արժանացել են մրցանակալային երրորդ տեղի: Գլխավոր մրցավարը գոհ է մարզիկների ցուցաբերած արդյունքից: Մարզիկները պարզեւատրվել են մեղավերով ու վկայականներով:

Ս. ԱՎԱԳՅԱՆ

ԻՆՉՊԵՆ ԴԱՌՆԱԼ ԼԱՎ ՄԱՐԶԻԿ

Սպորտում լավ արդյունքի հասնելը միայն մարզումները, հաղթանակները, ընկերներն ու երկրպագուները չեն: Դա նաեւ որոշ բաներից հրաժարվելն է, որոնք կարող են իրենց թույլ տալ ձեռնառկա մրցակիցները, սակայն որոնցից չհրաժարվելով՝ սպորտում արդյունքի հասնել հնարավոր չէ: Այս անգամ չենք անդրադառնում տարբեր մարզաձեւերի յուրահատկություններին, բայց նպատակային ենք համարում քննարկել ընդհանուր կանոններ, քանի որ դրանք միանման են:

Շատերն ասում են, որ լավ մարզիկ դառնալու համար պետք է այսպես անել, պետք է այնպես անել...

Մենք հավաքել ենք այն հիմնական խորհուրդները, որոնք տալիս են փորձառու մարզիչները, պրոֆեսիոնալ մարզիկները եւ սպորտում մեծ արդյունքի հասած մարզիկները մեզ հետ զրույցի ժամանակ: Հետեւելով խորհուրդներին՝ հնարավոր է խուսափել սխալներ թույլ տալուց, որոնք հատուկ են սկսնակ մարզիկներին ու անգամ պրոֆեսիոնալներին: Տվյալ հոդվածը կօգնի իմանալ ինչ անել, եթե համոզվել եք սման իրավիճակի: Իհարկե, ամեն ինչ չէ, որ հնարավոր է ներառել այստեղ, այնուամենայնիվ, հաշվի ենք առնում, որ այն օգտակար կլինի սկսնակներին, նրանց ծնողներին, ինչու չէ, նաեւ կայացած մարզիկներին ու մարզասերների համար: Սպորտում մանրուքներ չկան: Այսպիսով.

րի, նրանց ծնողներին, ինչու չէ, նաեւ կայացած մարզիկներին ու մարզասերների համար:

Սպորտում մանրուքներ չկան: Այսպիսով.

ՕՐԿԱ ՌԵԺԻՄ

Անհրաժեշտ է պլանավորել այն ամենը, ինչ պատրաստվում ես կատարել օրվա ընթացքում. ինչքան ժամանակ է զբաղեցնում տնից դեպի ուսման վայր տանող ճանապարհը եւ հակառակը, ինչքան ժամանակ է ծախսվում ճաշի վրա, ինչքան է տեւում մարզման վայր գնալը, որ ժամանակին հասնես, ինչպես նաեւ պետք է հստակեցնել ընթրիքի եւ քնելու ժամը: Քանի որ պրոֆեսիոնալ մարզիկի կյանքը ենթարկված է խիստ ռեժիմի, ժամանակը պետք է կազմակերպել հենց սկզբից: Եթե շատ տաղանդավոր ես, արդեն հաղթել ես որոշ մրցաշարերում եւ դարձել չեմպիոն, սակայն ուշանում ես պարապմունքներից ու չես կարող կազմակերպել օրը, ապա պրոֆեսիոնալ մարզիկ դառնալու քո հեռանկարը կասկածի է ենթարկված: Սպորտում մանրուքներ չկան: Արդարացումներն ու բացատրությունները մարզչին, թե ինչու ես

ուշացել երրորդ-չորրորդ անգամ, կարող եմ վերջանալ սպորտային կարիերայի ավարտով, որը դեռ չէր էլ սկսվել: Եղիր կազմակերպված:



Սևակ Սարգսյան

ՍՆՈՒՐ

Եթե հանրաճանաչ սպորտսմեն դառնալու նպատակ կա, ապա պետք է հիշել, որ այն, թե երբ ու ինչքան ես ուտում, ունի մեծ նշանա-

կություն: Ծանրաբեռնվածությունը, որն զգում է սպորտով զբաղվող մարդու օրգանիզմը, տարբերվում է չմարզվող մարդու զգացածից: Խոսքը հատկապես վերաբերում է դեռահասներին: Եթե չմարզվող պատանիներն ինչ-որ բան են վերցնում արագ սննդի կետերից եւ ուտում կամ կարող են բաց թողնել ճաշը, ապա պարապող մարզիկը դա չի կարող իրեն թույլ տալ: Մարզիկի օրգանիզմն իր ռեժիմն է պահանջում, սննդի որակն ու քանակը, քանի որ էներգիայի ծախսն ավելի շատ է: Իսկ այդ էներգիան մատակարարվում է սննդից, որը մենք օգտագործում ենք: Բայց դա չի նշանակում, թե ճաշի ժամանակ պետք է մի ամբողջ կով ուտել կամ քնելուց առաջ երեք լիտր կաթ խմել: Ամեն ինչում պետք է չափը պահել:

Օրվա մեջ պետք է սնվել 5-6 անգամ. ահա մարզիկի համար օպտիմալ սնվելու չափը, որին պետք է հարմարվել: Առավոտյան անպայման սկսում են նախաճաշել: Պրոֆեսիոնալներն պետք է մասնաճաշել շիլայից կամ կաթով մյուսլիից: Կարելի է ավելացնել պանրով բուտերբրոդ, կաթնաշոռ,



### ՍԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

բուլկի կամ այն, ինչ սիրում ես: Կակաո, թեյ, սուրճ, հյութ՝ ընտրություն: Ժամը 10-11-ը թեթև սնվել է պետք: Եթե առավոտյան մարզում է սպասվում, պետք է սնվել դրանից մեկ ժամ առաջ: Եթե նախաճաշից հետո ժամանակ չկա, ուրեմն մարզումից անմիջապես հետո պետք է ընդունել թեյ կամ հյութ բուլկիով, թխվածքաբլիթով: Բանան ուտելն էլ չի խանգարում, հատկապես, որ այն հարմար է հետո վերցնելու համար:

Ճաշը պետք է կազմակերպել ոչ ուշ, քան 15:00-ն, ավելի լավ է 13-14:00-ին: Իսկ երեկոյան մարզումից մեկ ժամ առաջ նորից թեթև ճաշել: Երեկոյան լավ ընթրել, ցանկալի է չուշացնել 20:00-ից: Քնելուց առաջ ընդունել մի բաժակ մածուկ կամ յոգուրտ:

**Կանոն:** Չի՛ կարելի առանց նախաճաշելու սկսել առավոտյան մարզանքը եւ չի՛ կարելի լցրած ստամոքսով գնալ երեկոյան մարզանքին:

Անհրաժեշտ է բազմազանել ճաշացանկը, փորձել եւ հարմարվել այն մթերքներին, որոնք չէիր կերել: Սննդակարգի մեջ անպայման պետք է լինեն բրինձ, հնդկաձավար եւ ուրիշ ձավարեղեն, մակարոնեղեն, միս, ձուկ, հավի կամ հնդկահավի միս, կաթնամթերք, բանջարեղեն ու մրգեղեն, մեղր, ընկույզ, չրեղեն եւ այլն: Ինչքան բազմազան լինի սննդակարգը, այնքան ավելի լավ կլինի արդյունքը:

#### ՔՈՒՆ

Եթե լավ չես քնել, ապա պարապմունքի որակը կնվազի, հնարավոր են հոգնածություն եւ վնասվածքներ, քանի որ մկանները եւ կենտրոնական նյարդային համակարգը, որը ղեկավարում է դրանց, չեն հասցրել հանգստանալ: Ինչքան էլ տխուր է հնչում, այնուամենայնիվ, պետք է կանոն դարձնել ու պահել քնելու երեկոյան ժամը 23:00-ից ոչ ուշ: Քունը պետք է լինի 8 ժամից ոչ պակաս, ավելի լավ է՝ 9-10 ժամ: Քանի որ քունը ուժերն ամենալավ վերականգնող միջոցն է, պետք է դրան հատուկ ուշադրություն դարձնել: Ճաշից հետո քնելու հնարավորությունը չպետք է բաց թողնել, հատկապես, եթե մարզումները երկու անգամ են օրվա մեջ: Սեկ ժամն էլ է բավական հանգստանալու եւ սպասվող մարզմանը պատրաստ լինելու համար:

#### ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ընկերոջ կամ ընկերուհու հետ կարելի է ժամերով գրուցել, ինչ-որ բան քննարկել, կիսվել տպավորություններով, զբոսնել: Բայց իմացիր չափը: Ջրուցակիցը կարող է իրեն թույլ տալ քնել առավոտյան, իսկ դու պետք է մարզվես: Իսկական ընկերը կամ ընկերուհին քաջ գիտի, որ դուրիս գործով չես զբաղվում, պատրաստվում ես մեծ սպորտի համար, եւ պետք է հասկանա, որ քո կանոնները չի կարելի կոտրել: Ընկերները չեն հրաժարվի քեզ հետ շփվել, իսկ հետո նույնիսկ կհպարտանան, որ ընկերություն են անում այդպիսի նպատակալաց մարդու հետ:

#### ՀԱՍՎԱՐԳԻՉ, ՀԵՌՈՒՄՈՍ

Ամեն ինչ իր ժամանակն ունի: Հետաքրքիր է խաղեր խաղալը, համացանցում ընկերների հետ շփվելը, բայց դու մարզիկ ես: Կան պահեր, որոնց պետք է ուշադրություն դարձնել: Համակարգիչն ու հեռախոսը աննկատելի ձեւով հոգնեցնում են: Վատանում են ռեակցիան ու շարժումները պարապմունքի ժամանակ: Մրցաշարերի ընթացքում շարժումները

կատարվում են ոչ լրիվ ճշգրտությամբ: Ի հայտ են գալիս հիմար սխալներ: Մարզիկին դա պետք չէ: Չէ՞ որ մարզիկն ունի նպատակ: Դրա համար էլ մարզումներից եւ մրցաշարերից առաջ համակարգչից օգտվելը, հեռախոսում խաղալը ցանկալի չեն: Այդ զբաղմունքի



Առաջին պլանում՝ սամբոյի չեմպիոն Դավիթ Հովսեփյան

համար հետո կարելի է ժամանակ հատկացնել, ավելի լավ է, որ դա լինի մարզումից հետո:

#### ՄՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՍԱԶԳԵՍ

Համազգեստը պետք է հարմար լինի: Պարապմունքի ընթացքում այն պետք է նկատել երկու անգամ. առաջին, երբ հագնում ես եւ ուրախանում, որ այն մաքուր է ու կոկիկ, իսկ երկրորդ, երբ հանում ես այն մարզանքից




Կրտսեր ծուղորիստներ Դավիթ Վերդիյան և Մարիա Ավանեսյան

կամ խաղից հետո: Պարապմունքի ժամանակ լավագույն համազգեստն այն է, որը չես նկատում: Եթե ստիպված ես լինում ուղղել, անընդհատ բարձրացնել վրայից սայթաքող տաբատը, տեղը զգել շարժվող եւ ծովող սաղավարտը, անընդհատ կապել կոշիկի քուղը, ուրեմն պետք է դրանք փոխել: Երբեմն ավելի լավ է հնամաշ համազգեստը, քան ամենանոր ֆիրմային սպորտային հագուստը: Պարապմունքի ժամանակ դա կարող է նույնիսկ խանգարել: Պետք է ի սկզբանե սովորել տնօրինել մարզահագուստի կամ համազգեստի վիճակը՝ ձեւավորելով պրոֆեսիոնալ վերաբերմունք դրանց հանդեպ: Եվ իհարկե, յուրաքանչյուր պարապմունքից հետո համազգեստը պետք է վաճառել ու հաջորդ պարապմունքից առաջ կարգի բերել:

#### ՍԱՐՁԱԿԱՆ ԿՈՇԻԿ

Մարզական կոշիկը չպետք է սեղմի: Եթե կոշիկները նոր են գնված, չպետք է անմիջապես դրանք հագնել պարապմունքի ժամանակ, առավել եւս, խաղի կամ մրցման ժամանակ: Պետք է նախապես փորձել դրանք. հագնել ու քայլել, վազել դրանցով՝ ստուգելու

համար, թե արդյո՞ք հարմար են, չե՞ն խանգարում, սեղմում կամ նեղություն տալիս: Եթե ստուգելիս թվում է, թե ինչ-որ բան այն չէ, ուրեմն պարապմունքի ժամանակ դա կվերածվի պրոբլեմի: Անպայման պետք է շտկել պահը: Պրոֆեսիոնալներին հատուկ ուսել կանոն կա. երբ գնում ես մարզանքի նոր մարզական կոշիկներով, նույնիսկ եթե սկզբում դրանք շատ հարմար են թվում, այնուամենայնիվ, անպայման հետո վերցրու հին զույքը: Պարապմունքի ժամանակ անհարմարավետություն զգալով՝ անհապաղ պետք է փոխել: Կամաց-կամաց պետք է հարմարվել: Եթե շարքից դուրս են եկել հարմար կոշիկները, լավ կլինի գնել նույնից, այլ ոչ թե ընկնել գերնոր մոդելի հետևից, որը կարող է հարմար չլինել: Մարզիկները պատմում են, որ երբեմն կրկնակի հաճույք են ստանում՝ հաղթելով նորաձեւ մոդելի մարզական հագուստ կամ կոշիկներ հագած մրցակցին: Մի՛ ընկեք գովազդի հետևից:



Երիկ Առստամյան 33-ի բռնցքամարտի եռակի չեմպիոն



Կանգնածը՝ սանդա ուշուի չեմպիոն Արսեն Բաղդյանն է:

#### ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱ

Առավոտը պետք է սկսել լիցքային վարժություններից: Մարզական վնասվածքների դեմ լավագույն պրոֆիլակտիկ միջոցը դա է: Անպայման պետք է, եթե իհարկե ձգտում եք նպատակի իրականացման, 10-15 րոպե տրամադրել մկաններին ու հոդերին: Թեթև վազքն ու հատուկ վարժությունները պետք է միացնել այն դեպքում, երբ ուզում եք հասնել ավելի բարձր նպատակի: Քիչ ժամանակ է պահանջվում լիցքային վարժությունների համար, բայց օրգանիզմն իսկույն լավ վիճակում է հայտնվում, տրամադրությունը բարձրանում

է, մկանների ցավը նահանջում է: Պարապմունքների արդյունավետությունը դրանից բարձրանում է:

Հաճախ, նաեւ պրոֆեսիոնալ սպորտում, երիտասարդ մարզիկները շատ ակտիվ են իրենց պահում պարապմունքներից առաջ: Մրցում են իրար հետ, վազում են, անտեղի շարժումներ են անում: Շատ անգամ վնասվածքներ են ստանում հենց այդ պահերին: Սկաններն ու հոդերը դեռ պատրաստ չեն լինում աշխատելու: Ֆիզիկական բոլոր ակտիվ վարժությունները պետք է սկսել նախավարժանքից հետո: Օրգանիզմը կնախապատրաստվի ժամաբեռնվելուն, մկանները, հյուսվածքներն ու հոդերը «կտաքանան». դա է պրոֆեսիոնալ մտեցումը:

Հանդերձարանում չի կարելի շրջել ոտաբոբիկ: Պետք է ունենալ առանձին հողաթափեր հանդերձարանում հագնելու եւ բաղնիք մտնելու ու դուրս գալու համար: Պարապմունքից հետո վազվելը պարտադիր է, նույնիսկ այն դեպքերում, երբ ուշանում եք որեւէ տեղից:

Հագնվել եղանակին համապատասխան: Նույնիսկ շոգին չխմել սառը ջուր սառույցով: Հասարակ է հնչում, բայց պրոֆեսիոնալ մարզիկներն այդ հարցերում շատ ուշադիր են: «Հիմար» մրսածությունը կամ հարբուխը կարող է մի քանի օրով կամ շաբաթով զրկել պարապմունքներից, մրցաշարերի կամ սպորտային խաղերի մասնակցելու հնարավորությունից: Ստիպված ես լինելու նորից վերականգնել մարզավիճակդ, որն այնքան էլ հեշտ չի լինի: Լինում են դեպքեր, երբ պարապմունքի ժամանակ անհարմար կոշիկ հագնելու պատճառով մարզիկները փքեցնում են ոտքերի մատները ու այդպիսի մանրուքի համար չեն կարողանում մի քանի օր պարապել: Այդ դեպքում պետք է մարզման ժամանակ չամաչել մարզիչից եւ հայտնել նրան, որ անհրաժեշտ է փոխել կոշիկները: Նախքան պարապմունքը, ընթացքում եւ հետո պետք է գնահատել ինքնազգացողությունը: Եթե լավ չես զգում քեզ, պարապմունքն օգուտ չի տա: Եթե ջերմություն ունես, չպետք է գնալ պարապմունքի, մասնակցել խաղի կամ մրցույթի, նույնիսկ եթե քո մեջ ուժ ես զգում: Դա կհանգեցնի ավելի վատ հետևանքների, ստիպված կլինես երկար ժամանակով բաց թողնել պարապմունքները ու չտեսնել թիմակիցներիդ: Ցավոք տեղի կամ վատ ինքնազգացողության մասին պետք է հայտնել մարզչին:

#### ՍՈՎՈՐԵԼ

Պետք է հաշվի առնել, որ վաղ թե ուշ սպորտային կարիերան կարող է վերջանալ, կամ հանգամանքները կարող են այնպես դասավորվել, որ կարիերա այդպես էլ չստացվի:

Մի՛ կորցրու ժամանակդ իզուր, սովորիր: Այդ փուլը հեշտ կհաղթահարվի, եթե կրթված լինես: Իսկ եթե հաղթող դառնաս, իմացիր, որ կրթված չեմպիոններն ավելի հետաքրքիր են: Սովորիր տարբեր լեզուներ: Պրոֆեսիոնալ մարզիկներից շատերը խոսում են մի քանի օտար լեզուներով: Լեզուների տիրապետելը սպորտային վարպետության կողմերից մեկն է համարվում:

Չարգացիր: Շրջապատում շատ հետաքրքիր բաներ կան: Ճանաչիր եւ զարգացրու քեզ: Ինչքան բազմակողմանի լինես զարգացած, այնքան հեշտ կլինի հասնել դրված նպատակներին: Հաղթող եղիր ոչ միայն սպորտում, այլև կյանքում:

ՀՈԳԵՎՈՐ

ՎԱՐՂԱՎԱՌ ԿԱՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅՏԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



Սիրելի ընթերցող, «Լուսարար»-ը այսուհետ Յայ Առաքելական սուրբ եկեղեցու Արցախի թեմի սպասավորների կողմից պարբերաբար կներկայացնի մեր եկեղեցու տոները, դրանց հետ կապված ազգային սովորույթներն ու ավանդույթները, տոների խորհուրդները և պատգամները:

ՏԱՐԱՎԱՐ ՏՈՆԵՐ

Տաղավար տոներ են կոչվում Յայ Առաքելական եկեղեցու հինգ ամենամեծ Տերունի տոները, որոնք կապված են Տիրոջ փրկագործական տնօրինությունների հետ և տևում են մի քանի օր: Այդ տոներն են՝ Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն, Սուրբ Զատիկ կամ Գարություն, Սուրբ Զատիկ կամ Գարություն, Վերափոխումն Ար. Աստվածածնի և Խաչվերաց: Զին կտակարանում նկարագրվում է հրեաների մեծահանդես արարողությանը տոնակատարվող Տաղավարահարաց տոնը՝ աշնանային բերքահավաքի տոնը: Այն կատարվել է յոթերորդ ամսվա 15-րդ օրը և տևել յոթ օր (Ղևտ. 23.33-43, Բ Օր. 16.13-17): Տաղավարահարաց տոնը հիշատակվում է նաև Նոր կտակարանում (Հովհ. 7.2-10), նաև հիշատակվում են Հիսուսի ուսուցումները տոնակատարության ժամանակ (Հովհ. 7.11-24, 37-39): Այդ օրերին հրեաները յոթ օր ապրել են վրաններում

(տաղավարներում, այստեղից էլ՝ տոնի անունը) և մեծ տոնախմբություններով, ողջակեզ մատուցելով, հանդեսներով երախտագիտություն հայտնել Աստծուն՝ պարզապես բարիքների համար: Ենթադրվում է, որ Տաղավար անվանումն առաջացել է այդտեղից և գործածական դարձել քրիստոնեական մեծ Տերունի տոների համար:

Այս տարի հուլիսի 24-ին Յայ Առաքելական սուրբ եկեղեցին տոնում է մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Այլակերպության կամ Պայծառակերպության տոնը, որը ժողովուրդը նաև անվանում է Վարդավառ:

ՎԱՐՂԱՎԱՌ ՊԱՅՏԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Յայ Առաքելական Սուրբ եկեղեցու 5 տաղավար(զվխավոր) տոներից երրորդն է: Տոնվում է Զատիկից 14 շաբաթ կամ 98 օր հետո, ունի 35 օրվա շարժականություն և կարող է հանդիպել հունիսի 28-ից մինչև օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

Այլակերպվել նշանակում է կերպարանափոխվել, պայծառակերպվել՝ պայծառ, լուսավոր կերպարանք ստանալ:

ՏՈՆԻ ԱՍՏՎԱԾԱՆՆՉԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

Տոնի հիմքն Աստվածաշնչում նկարագրված դեպքն է, որը տեղի է ունեցել Հիսուս Քրիստոսի հետ Թաբոր լեռան վրա (Մատթ.17:1-8, Մարկ.9:2-8, Ղուկ.9:28-36): Ավետարանները պատմում են, որ իր գիշերային հսկումն ու ամենօրյա աղոթքն անելու համար Հիսուս Քրիստոսն առաքյալներից իննին ստորոտում թողնելով՝ որպես աղոթակից իր հետ վերցրեց երեքին՝ Սիմոն Պետրոսին, Ջեբեդյան եղբայրներ Հակոբոսին և Հովհաննեսին ու բարձրացավ լեռը: Երբ Հիսուսն աղոթում էր, առաքյալները հոգնած նիդեցին: Աղոթքի ժամանակ Նա սկսեց լույս ճառագել ինչ-

պես արեգակ, Նրա հագուստները սպիտակեցին ու դարձան շլացուցիչ ծյունածեղման: Այնտեղ հայտնվեցին Մովսեսն ու Եղիամ և սկսեցին խոսել Նրա հետ: Լույսի և աստվածային հայտնության այս համադրումը սբափեցրեց առաքյալներին, ովքեր նորահարաշ այս տեսիլքի ազդեցությունից համակվեցին աննկարագրելի մի զգացողությամբ և ցանկանում էին, որ այդ զգացողությունը տևական լինի: Դրա լավագույն վկայությունն է Պետրոսի խոսքը Հիսուսին. «Վարդավառ, լավ է, որ մենք այստեղ ենք, երեք տաղավար շինեցք, մեկը՝ Քեզ, մեկը՝ Մովսեսի և մեկը՝ Եղիայի համար» (Ղուկ.9:33): Սակայն Պետրոսի առաջարկն, ինչպես պարզ է դառնում ավետարանի խոսքից, անտեղի էր, ապշանքի արդյունք. «Չէր հասկանում ինչ էր խոսում»: Այդ ժամանակ մի անպ նրանց հովանի եղավ, ամպից մի ձայն եկավ. «Դա է Իմ սիրելի Որդին, Դրան լսեցեք» (Մարկ.9:7): «Երբ աշակերտներն այդ լսեցին, երեսնիվայր ընկան և շատ վախեցան: Եվ Հիսուսը մոտենալով՝ դիպավ նրանց ու ասաց. «Բարձրացեք և մի վախեցեք»: Եվ երբ իրենց աչքերը բարձրացրին, բացի Հիսուսից ոչ մեկի չտեսան» (Մատթ.17:6-8):

Տիրոջ Պայծառակերպության կարգում IV դարում Կոնստանդին Մեծ կայսեր մայրը՝ Զեղինեն, եկեղեցի է կառուցել ի հիշատակ Տիրոջ պայծառակերպվելու:

ՎԱՐՂԱՎԱՌ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Տիրոջ Պայծառակերպության տոնը ժողովրդական լեզվով անվանում են Վարդավառ: Այն հայ ազգի մեջ հնագույն արմատներ ունեցող տոներից է: Վարդավառ անվանումը ըստ Գրիգոր Տաթևացու կապվում է Տիրոջ վարդի հետ համեմատելու հետ:

Ինչպես վարդը կոկոնի մեջ է ծածկված լինում մինչև բացվելը, նույնպես և Տերը նախքան պայծառակերպվել իր մեջ ուներ Աստվածության պայծառությունը, և ինչպես

վարդը բացվելով ամենքին հայտնապես երևում է, այնպես է մեր Տերը պայծառակերպվելով՝ հայտնեց Իր Աստվածությունը:

Վարդը քանի դեռ կոկոն է, ոչ գեղեցկությունն է երևում, ոչ անուշահոտությունն է զգացվում, իսկ ժամանակը լրանալուն պես փթթում է և իր գույնով ու անուշահոտությամբ մարդկանց ուրախացնում: Այդպես էլ Քրիստոսը կուսական արգանդում սնվեց ու զարգացավ որպես կոկոն և ապա ծնվելով՝ աստղի ու հրեշտակների ավետիսով հայտնվեց մոզերին, իսկ կատարյալ հասակին հասնելով՝ նշաններով ու սքանչելիքներով հայտնվեց բոլորին:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տոնի հետ կապված մեր ժողովրդն ունի բազում սովորույթներ: Վարդավառի տոնն իր մեջ ընդգրկել է նաև բերքատվության, պտղաբերության խորհուրդը:

Շատ վայրերում Վարդավառի տոնին կրակ են վառել և կրակից մնացած մոխիրը լցրել գետը, որպեսզի այդ տարի ջուրն առատ ու օրհնված լինի:

Արգելված է եղել Վարդավառից առաջ խմոր ուտելը (ինչպես Աստվածածնի Վերափոխման տոնից առաջ՝ խաղող), այսպես կոչված՝ խմորի պաս է եղել:

Որոշ գավառներում նշանված աղջիկները մրգերով ու բանջարեղենով, վարդերով և այլ ծաղիկներով զարդարված խաչափայտ են պատրաստել, միայն խմոր ու ծաղիկ նվիրել:

Պայծառակերպության տոնին միմյանց վրա ջուր ցողելու սովորությունն ավանդությունը կապում է Նոյ նահապետի պատմության հետ: Համաձայն այս ավանդության՝ այն առաջացել է ջրհեղեղը վերապրած մարդկանց շրջանում ջրի անզորությունը շեշտելու և Աստծո հանդեպ իրենց հավատարմությունը վկայելու և հաստատելու նպատակով:

Այսուհանդերձ, Վարդավառը մեզանում նախառաջ կարևորվում է նրանով, որ այն մեր Տեր Հիսուս Քրիստոսի Այլակերպության տոնն է: Եվ Այլակերպության տոնի հարանորոգ խորհրդով հարկ է հոգին ձերբազատել ամեն տեսակ մեղքերից՝ պահելով աստվածային պատվիրաններն ու սիրելով Աստծուն:

Պայծառակերպության խորհուրդը մեզանում կարևորում է մանավանդ աղոթական կյանքի դերը, որով Տիրոջը նմանվելու ցանկությամբ բոլոր քրիստոնյաները, որպես մի ժամանակ քնած և այժմ արդեն Տիրոջ փառքի լույսից սթափված ու լուսավորված, աղոթքի են կանգնում Տիրոջ սքանչելի Աստվածությունը տեսնելու, այլակերպությանը մասնակից լինելու մեծագույն փափագով:

Ինչպես Վարդավառին, այնպես էլ մյուս չորս տաղավար տոներին հաջորդող օրը Մեռելոց է՝ հիշատակի օր, երբ նմանաբանների հոգիների համար մատուցվում է Սուրբ Պատարագ և կատարվում հոգեհանգիստ:

1240 թ. հուլիսի 22-ին՝ Վարդավառի տոնին է օծվել Գանձասարի վանքի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: Վարդավառի տոնի օրը նաև համարվում է Գանձասարի վանքի ուխտի օր:

ՇԱՐՎԱԿԱՆ ՎԱՐՂԱՎԱՌԻ

Որ ի լերինն այլակերպեալ՝ ցուցեր գաստուածային Քո զօրութիւնդ, զՔեզ փառաւորեմք, իմանալի Լոյս:

Որ գնառագայթ փառաց Քոց ցուցեր արեգակնակերպ փայլմամբ, գարարած լուսաւորեցիք, զՔեզ փառաւորեմք, իմանալի Լոյս:

Որ ահագին տեսլեամք զարիւրեցուցեր զՔո զաշակերտսն ի թմրութիւն հրաշիցն ի սէր աստուածային փառաց Քոց, զՔեզ փառաւորեմք, իմանալի Լոյս:

Արթուր Կարկ ԱՐԲԱՍՏԱՆ Արցախի թեմի ՔԴՔԿ փոխպետ

«ԱՐՑԱՒ. ԶՏԵՆՎԱԾ ԸՆԴՈՒՄԵՆՈՒԹՅՈՒՆ». ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՆԱՏՈՆՈՒՄ ԱՐՑԱՒԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՖԻԼՄԵՐ ՑՈՒՑԱԴՐՎԵՑԻՆ

Հուլիսի 10-17-ը երևանում անցկացվում է «Ոսկե ծիրան» 19-րդ միջազգային կինոփառատոնը: Փառատոնի լիամետրաժ ֆիլմերի միջազգային մրցույթի ժյուրին նախագահում է իռլանդացի սցենարիստ, ռեժիսոր, օսկարակիր Թերի Զորջը, պատվո իտալիացի թվում են Կաննի և Բեռլինի մրցանակակիր, օսկարակիր ռեժիսոր և սցենարիստ, լեգենդար Կոստա Գավրաք, իսպանացի ինքնակազմ կինոռեժիսոր Ալբերտ Սեռան, Կաննի կրկնակի մրցանակակիր ֆիլմերի պրոդյուսեր Ֆիլիպ Բոբերը, Իլյա Խրժանովսկին: Փառատոնային շաբաթվա ընթացքում ներկայացվել են կինոաշխարհի լավագույն մրցույթները:

Կինոփառատոնի մեկնարկը տրվեց հեղինակավոր «Էմմի»-ի մրցանակակիր դերասան, ռեժիսոր և սցենարիստ Մայքլ Գյուրջյանի Հայաստան-ԱՄՆ համատեղ արտադրության «Ամերիկացի» ֆիլմով, որում, ամերիկահայ Չարլին, 1940-ականների վերջին վերադառնալով Հայաստան, բախվում է խորհրդային դաժան իրականությանը: Ֆիլմում նկարահանվել է նաև արմատներով արցախցի, ՀՀ վաստակավոր արտիստ, դերասանուհի Նարինե Գրիգորյանը:

Կինոփառատոնի շրջանակներում «ԱՐՑԱՒ. Զտեսնված հանրապետություն» խորագրով ներկայացվեց հատուկ ծրագիր, որի ֆիլմերը



WE ARE OUR MOUNTAINS Federico Lemos

ՄԵՆԵ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ Ֆեդերիկո Լեմոս



THE FORGOTTEN HOMELAND Essam Nagy

ՄՈՐԱՑՎԱԾ ՀԱՅՐԵՆԻՔ Էսամ Նագի



THE POMEGRANATES OF NAGORNO KARABAGH Thomas Sideris

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՐԻ ՆՈՒՆԵՐԸ Թոմաս Սիդերիս



RESISTANCE Arman Yertayan

ԴԻՍԿԱՅՈՒԹՅՈՒՆ Էրման Երցյան

մերն անդրադառնում են 44-օրյա պատերազմին և նկարահանված են հույների, արեգստի-նացիների, ուրուզվայցիների, եզդիացիների և հայերի կողմից: Այդ ֆիլմերն են՝ «Մոռացված հայրենիք», ռեժ.՝ Էսամ Նագի (Եզդիացի), «Մենք ենք մեր սարերը, ռեժ.՝ Ֆեդերիկո Լեմոս (Արգենտինա/Ուրուգվայ), «Լեռնային Ղարաբաղի նոսրերը» (Հունաստան), ռեժ.՝ Թոմաս Սիդերիս, «Դիմակայություն», ռեժ.՝ Արման Երցյան (Հայաստան):

Երևանի «Ոսկե ծիրան» 19-րդ միջազգային կինոփառատոնի փակումը ազդարարվել է Կարին Հովհաննիսյանի «Զտեսնված հանրապետություն» ֆիլմով, որը 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմը ներկայացնում է գրող և լուսանկարիչ Լիկա Զաքարյանի օրագրի միջոցով:

ՎՈՒՄ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԿՈՐԵԼ Է

Գայանե Գրիգորիի Սարգսյանի 8-ամյա կրթության 842558 համարի վկայականը՝ տրված 1985 թվականին՝ Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի կողմից: Համարել անվավեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՐԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info

Մեքերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության՝ 16.07.2022թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: